



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Մայիսեան Զերոսամարտերուն Եւ Առաջին Զանրապետութեան 100-ամեակին Առթիւ

1918-ի Մայիս ամսուն, Ցեղասպանութենէն մազապուրծ ազատած հայ ժողովուրդի բեկորները մահ ու կենաց կռիւներ մղեցին թրքական ներխուժող բանակներուն դէմ, որոնք հասած էին Երեւանի դռները, սպառնալով բնաջինջ ընել հայութեան մնացորդացը:

Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսի մէջ հայկական զօրքերը հերոսական դիմադրութեամբ ոչ միայն կասեցուցին թշնամի յառաջխաղացքը այլ, հակայարձակումի անցնելով յաջողեցան ազատագրել հայրենի հողերու մէկ կարեւոր մասը եւ պարտադրել թրքական զօրքերուն դիմելու փախուստի:

Այդ բախտորոշ օրերուն Զայ ժողովուրդը ցուցաբերեց ազգային միասնականութեան գերազանց ոգի, որու արդիւնքը եղաւ այն, որ 600 տարիներու ստրկութենէ ետք հայութիւնը վերականգնեց իր պետականութիւնը՝ իր պատմական հողերու մէկ մասին վրայ:

Այս օրերուն ազգովին կը նշենք Մայիսեան Զերոսամարտերուն եւ առաջին Զանրապետութեան 100-ամեակները՝ Զայաստանի մէջ պետական մաշտաբով, իսկ սփիւռքի տարածքին աւանդական կուսակցութիւններու աննախադէպ համագործակցութեամբ: Աննախադէպ կ'ըսենք, քանի որ անցնող տասնամեակներուն Զայաստանի առաջին հանրապետութեան տօնակատարութիւնները չէի արժանացած միասնական ընկալման: 1918-ի Մայիսի 28-ին հռչակուած անկախութեան թուականը տասնամեակներ շարունակ եղած է ամենէն խնդրայարոյց հարցը ու սփիւռքի մէջ գոյութիւն ունեցած պառակտումներու գլխաւոր ազդակներէն մին: Այսօր յաղթահարուած են վերապահութիւնները, քանդուած են արհեստական պատնէշները եւ ըստ արժանւոյն կը նշենք մեր պատմութեան մէջ անկիւնադարձային նշանակութիւն ունեցող այս տօները, որոնց շնորհիւ մեր ժողովուրդը կարողացաւ վերապրիլ, գոյատեւել ու կառուցել իր երկիրը՝ հասնելու համար այսօրուայ նորանկախ Զայաստանի իրականութեան:

Խիստ դժուարին պայմաններու տակ ծնունդ առած Առաջին Զանրապետութիւնը ունեցաւ երկու տարուայ կարճատեւ կեանք մը, որու գնահատականն ու արժեւորումը կատարած են պատմաբանները ու տակաւին կը շարունակեն կատարել մինչեւ

այսօր: Անոր յաջորդած Խորհրդային Զայաստանը իր 70 ամեայ գոյութեան ընթացքին, հակառակ իր բազում թերութիւններուն, Զայ ժողովուրդին պարգեւեց խաղաղութեան եւ ապահովութեան շրջան մը, որոնց շնորհիւ ան կարողացաւ ապրիլ զարթօնքի շրջան մը յատկապէս մշակոյթի, գրականութեան, բարձր արուեստի ու շինարարութեան բնագաւառներէն ներս, որոնց շարքին էր նաեւ 1968 թուականին կառուցուած Սարդարապատի հերոսամարտի յուշակոթողն ու համալիրը:

1991 թուականի Սեպտեմբերին, Խորհրդային Միութեան լուծարումէն ետք ծնունդ առած երրորդ եւ նորանկախ Զայաստանը շարունակութիւնն է նախորդ երկուքին: Այժմ, մեր ուշադրութիւնը պէտք է կեդրոնանայ այսօրուայ Զայաստանին վրայ: Անոր հզօրացումը ու ժողովուրդի բարգաւաճումը միակ գրաւականն է մեր ազգի գոյութեան եւ յառաջդիմութեան:

Ինչպէս անցեալ դարասկիզբին, այսօր եւս Զայաստանի նկատմամբ թրքական թշնամական վերաբերմունքը կը շարունակուի՝ փակելով երկու երկիրներուն միջեւ սահմանը ու նաեւ քաջալերելով Պաքուի իր ազգակիցներուն մնայուն պատերազմական վիճակի մէջ պահելու մեր երկրի սահմանները:

Սարդարապատի ոգին վերընծուողուեցաւ նաեւ Արցախեան ազատամարտի դաշտերուն վրայ ու հայ ժողովուրդը կարողացաւ ազատագրել նաեւ իր հայրենիքէն մաս մը եւս:

Վերջին հարիւրամեակի ընթացքին Մայիս ամիսը Զայ ժողովուրդին համար հանդիսացաւ յաղթանակներու ամիս: Սարդարապատեան ճակատամարտներու յաղթանակները, Զայաստանի առաջին հանրապետութեան հռչակումը, Շուշիի ազատագրումը, բոլորն ալ իրականացած են Մայիս ամիսներու ընթացքին: Այս տարուայ Մայիս ամիսը եւս նշանաւորուեցաւ՝ Զայաստանի մէջ տեղի ունեցած ժողովրդային խաղաղ յեղափոխութեան յաղթանակով:

Այսօր, ՆՈՐ Զայաստանի հովանիին տակ ազգովին կը նշենք Մայիսեան հերոսամարտերուն եւ Առաջին Զանրապետութեան 100-ամեակը՝ ապագային նկատմամբ համընդհանուր լաւատեսութեան ու վստահութեան մթնոլորտի մը ներքեւ, որ մեր ազգին կը խոստանայ նորանոր ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ:



### ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Կառավարութիւնը Ստադիր է Վերացնել ՀՀ-ի Մէջ Սփիւռքի Ներգրաւուածութիւնը Խոչընդոտող Սահմանադրական Արգելքները

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, թէ մտադիր են վերացնել Մասնաճիւղային Նախատեսուած այն արգելքները, որոնք արհեստականորէն կը խոչընդոտեն սփիւռքի ներգրաւուածութիւնը Հայաստանի պետական հիմնարկութիւններու կայացման գործին մէջ:



«Մենք մտադիր ենք այս արգելքները վերացնել, որպէսզի սփիւռքի ներուժը հնարաւորութիւն ունենանք օգտագործել պետական կառավարման եւ պետական ապարատներէ (գործիք) կայացման գործում», - յայտարարած է Փաշինեանը Լոս Անճըլըսի մէջ ընթացող Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանի Հայկական ուսումնասիրութիւններու հիմնարկի «Հայաստանը վաղը. քաղաքացիական դիւանագիտութիւնը» գործողութեան մէջ» քննարկման ժամանակ՝ պատասխանելով հարցին, թէ ինչպէս պիտի շարունակեն քաղաքացիները ներգրաւուած պահել քաղաքական գործընթացներուն ընտրութեանն ընտրութիւն ինկած ժամանակահատուածի մէջ:

### Փաշինեան տեսակամուրջի միջոցով կը մասնակցի Լոս Անճըլըսի քննարկումին

նր քաղաքացիներու ներգրաւուածութեան, Նիկոլ Փաշինեան ըսած է, որ երկրի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններէն յետոյ նման խնդիր այլեւս չունին:

Վարչապետը, որ քննարկման մասնակցած է տեսակամուրջի միջոցով, յոյս յայտնած է, որ առաջիկային կը հանդիպին սփիւռքի այլ ներկայացուցիչներու հետ, որպէսզի առաւել մանրամասն քննարկեն ընելիքները. - «Որովհետեւ իսկապէս սա համազգային զարթոնքի պահ է եւ այդ պահը պէտք է մեզ բոլորիս բերի յաղթանակ»:

## Մարդկային Իրաւանց Պաշտպանը Խստօրէն Կը Քննադատէ Անցեալ Տարուան Ընտրութիւնները

Հայաստանի Խորհրդարանէն ներս 2017 թուականի տարեկան հաղորդումը ներկայացնելու ժամանակ Մարդու իրաւունքներու պաշտպան Արման Թաթոյեանը ելոյթի մեծագոյն բաժինը նուիրած է նախորդ տարի իրականացուած խորհրդարանական, երեսնի աւագանիի եւ տեղական ինքնակառավարման մարմիններու (ՏԻՄ) ընտրութիւններուն:



### Մարդու իրաւունքներու պաշտպան Արման Թաթոյեան

աչակերտներու ծնողները, դպրոցներու մէջ քարոզչութիւն կատարած են: Օմպուտսմէնը իր տարեկան հաղորդումը ներկայացուցած է կիսադատարկ դահլիճի մէջ: Աժ փոխնախագահ Միքայէլ Մելքոնեանը նախորդ եւ այս գեկոյցի միջոց եւ շնորհակալութիւններով արգելադրուած է եւ ըսած, որ այս գեկոյցին կը հասկնայ, որ սուր խնդիրներ կան երկրի մէջ, մինչդեռ ինչպէ՞ս կը ստացուի, որ Հանրային հեռուստաընկերութեան ներկայացուցած Հայաստանը լրիւ այլ եղած է:

Ան յայտարարած է. «Արձանագրուել են մտահոգիչ տեղեկութիւններ ու դէպքեր ընտրակաշառքի բաժանման, վարչական ռեսուրսի (միջոց) չարաշահման վերաբերեալ»:

Թաթոյեանը յայտարարած է, որ իրենք արձանագրած են հանրային ծառայողներու, ինչպէս նաեւ դպրոցներու աշխատակիցներուն ճնշելու դեպքեր, որոշ պարագաներուն ալ ընտրողներուն վախճուցած են՝ ճշգրիտ թեկնածուի օգտին քուէարկելու նպատակով:

Թաթոյեանը յայտարարած է, որ չնայած օրէնքի արգելքին՝ դէպքեր արձանագրուած են, երբ նախընտրական շրջանին դպրոցներու աշխատակիցները ցուցակագրած են

## Արցախի Մասնակցութիւնը Բանակցութիւններուն Պարտադիր է

Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան խօսնակ Տիգրան Պալաջեանը մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարած է, որ Արցախի մասնակցութիւնը բանակցութիւններուն՝ պարտադիր պայման է յստակ, հաւասարակշիռ եւ տեւական խաղաղութեան հասնելու համար:

«Մեր խնդիրն այսօր հետեւեալն է, որ Ատրպէյճանի իշխանութիւնը, որ 2003 թուականից բանակցում է Ատրպէյճանի անունից, յստակ կը գիտակցի, որ տեւական, ամուր կարգաւորմանը հասնելու ճանապարհը Ղարաբաղի հետ ուղիղ նստել, բանակցելն է», - ըսած է Պալաջեանը:

ԱԳՆ խօսնակը միեւնոյն ժամանակ ընդգծած է՝ Հայաստանը չի հրաժարիր բանակցութիւններէն:

«Այնպէս չէ, որ մենք հրաժարուում ենք բանակցութիւններից, մենք, այո, որպէս Հայաստան, որպէս Արցախի երաշխաւոր, մենք շարունակելու ենք բանակցութիւնները՝ միեւնոյն ժամանակ ասելով, որ Արցախի մասնակցութիւնը բանակցութիւններին դա պարտադիր պայման է յստակ, հաւասարակշիռ եւ տեւական խաղաղութեանը հասնելու համար», - ըսած է Պալաջեանը:

## Պիտի Ստեղծուի Փտածութեան Պայքարի Նոր Մարմին

«Կոռուպցիա (փտածութիւն) դէմ պայքարը թեւակոխում է առաւել վճռական ու թիրախաւորուած փուլ», - յայտարարած է Արդարադատութեան նորանշանակ նախարար Արտակ Զէյնալեանը, աւելցնելով, որ շուտով փտածութեան դէմ պայքարող նոր մարմին պիտի ստեղծուի:



### Արդարադատութեան նախարար Արտակ Զէյնալեան

Նախարարը փոխանցած է, որ փտածութեան դէմ պայքարի համար, ըստ էութեան, աննախադէպ լիազօրութիւններով օժտուած նոր մարմինի հայեցակարգը դեռ մշակման փուլի մէջ է, եւ աւելցուցած է, որ աշխատանքներուն պիտի ապահովուի քաղաքացիական հանրութեան լայն ներգրաւում. - «Առանցքային ուշադրութեան է արժանանալու կոռուպցիոն դէպքերի բացառապէս ցուցանիշի բարելաւումը: Մենք պէտք է առաւելագոյն ջանքեր գործադրենք կոռուպցիան համատեղ ուժերով յաղթահարելու, կոռուպցիոն երեւոյթները դէպքում պատժու անխուսափելի դարձնելու ուղղութեամբ»:

Հայաստանեան հասարակական կազմակերպութիւններու հակափտածութեան միութիւնը համակարգող Կարէն Զատոյեանը ներկայացուցած է փտածութեան դէմ պայքարի իրենց տեսլականը: Օրինակ, կ'առաջարկուի փտածութեան հետեւանքով Հայաստանին պատճառուած վնասը փոխհատուցելու համար ներդնել երկրէն դուրս բերուած գումարներու վերադարձման համակարգ, որ կը հիմնուի քրէական ու քաղաքացիական դատավարութեան վրայ. - «Ակտիւները վերադարձը չի նշանակում, որ ճշգրիտ թիրախաւորել ինչ-որ անձանց: Ակտիւները վերադարձը իրա-

ւական գործընթաց է, պէտք է խուսափելի որեւէ վեներետաներից (վրէժխնդրութիւն), հաշուեյարդարներից: Դա պէտք է կատարուի իրաւական ընթացակարգերով, դատական ակտերի (պատիժ) միջոցով: Իսկ մնացածը արդէն քննութիւնը կը պարզէ ճշգրիտ անձանց շրջանակը»:

Փաշինեանի գլխաւորած կառավարութեան կազմակերպութիւնները կ'առաջարկեն նաեւ անպատժելիութեան միջոցով վերացնելու նպատակով խորամուխ ըլլալ ապօրինի հարստացման դէպքերու բացառապէս մէջ, եւ մենաշնորհներու դէմ պայքարի համար հիմնել իրական սեփականատէրերու արձանագրութիւն:

Հակափտածութեան բարեփոխումներու ու կառուցներու ստեղծման մասին յայտարարած են Հանրապետական կուսակցութեան գլխաւորած բոլոր կառավարութիւնները, այդուհանդերձ, անոնց աշխատանքի արդիւնաւէտութիւնը հակափտածութեան կազմակերպութիւններու կողմէ կասկածի տակ կ'առնուէին:

## «ԱԿԾ Տնօրէնի Յայտարարութեան Պէտք է Յաջորդեն Ձերբակալութիւններ»։ Գորգիսեան

«Ելք» խմբակցութեան քարտուղար Գէորգ Գորգիսեանի համոզմամբ, Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) տնօրէն Արթուր Վանեցեանի յայտարարութեան պէտք է յաջորդեն ձերբակալութիւնները:

Գորգիսեանը նշած է, թէ եթէ ԱԱԾ-ին յայտնի է, որ ինչ-որ կառուցներու մէջ եղած է փտածութիւն, ուրեմն փտածութեամբ զբաղողները պէտք է միանշանակ պատժուին:

Նշենք, որ Ազգային անվտանգութեան ծառայութեան նորանշանակ տնօրէնը լրատուամիջոցներու հետ հանդիպման ժամանակ բաւական ուշադրաւ յայտարարութիւն ըրած էր՝ ըսելով, որ իր ունեցած տեղեկութիւններով, վարչապետ Փաշինեանի ընտրութեան յետոյ աւանդական փտած հիմնարկները ամբողջութեամբ դադարեցուցած են իրենց հակաօրինական գործունէութիւնը:

«Ազատութեան» հարցին, թէ Նիկոլ Փաշինեան ըսած է, որ վրէժխնդրութիւն պիտի չըլլայ Գորգիսեան պատասխանած է. «Օրէնքի խախտումը չի կարելի դիտարկել որպէս վեներետա (վրէժխնդրութիւն), կամ նման մի բան, վեներետա կը լինէր, եթէ պարոն Փաշինեանը զար եւ ասէր, որ այլեւս Սամուէլ Ալեքսանեանը չի ներմուծելու շաքարաւազ, ներմուծելու է միայն, ենթադրենք, Արարատ Միրզոյեանը, դա կը լինէր վեներետա, եթէ անօրինական

ճանապարհներով որոշ գործարարներից ունեցուածքի բռնագանձում տեղի ունենար, դա կը լինէր վեներետա: Խօսքը հիմա գնում է օրինականութեան սահմաններում օրէնքի առաջ բոլորի հաւասարութեան մասին: Եթէ մարդիկ օրէնքը խախտել են, լինի դատական ցանկացած գանցանք՝ կոռուպցիա (փտածութիւն), պաշտօնական դիրքի չարաշահում, մարդ սպաննել, թէ բռնաբարել, դրանք բոլորը օրէնքի խախտումներ են եւ ցանկացած մարդ պէտք է պատժուի, եթէ կատարել է օրէնքի խախտում:

«Ազատութեան» հարցին, թէ համամիտ չէ, որ նաեւ խնդրայարուց է ԱԱԾ տնօրէնի այս յայտարարութիւնը այն առումով, որ ի վերջոյ ան երկար տարիներ այդ համակարգի մէջ աշխատած է, բարձր պաշտօններ զբաղեցուցած է, ինչպէ՞ս ան այդ ամէնը տեսած եւ լուած է, եւ միայն այսօր բարձրաձայնած է՝ Գորգիսեան պատասխանած է. «Գիտէք, պարոն Փաշինեանի վարած կատարային (անձնակազմային) քաղաքականութեան ես չեմ կարող հիմա գնահատական տալ, բայց ենթադրաբար կարծում եմ, որ նա տալիս է երկրորդ հնարաւորութիւն այն մարդկանց, ովքեր նոյն Օսիպեանի վերանշանակմամբ, ովքեր եղել են համակարգում, ծանօթ են համակարգի խնդիրներին, հիմա ունեն հնարաւորութիւն էր խնդիրները շտկելու», ըսած է Գորգիսեան:

ԼՈՒՐԵՐ

«Նոր Չարթունք» Նախաձեռնությունը Աջակցություն Յայտնած «Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցության»

Թուրքիոյ մէջ պոլսահայ երիտասարդներու հիմնած «Նոր զարթոնք» քաղաքացիական նախաձեռնութիւնը 24 Յունիսին տեղի ունենալիք համապետական ընտրութիւններուն ընդառաջ իր աջակցութիւնը յայտնած է քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» (ԺԴԿ-HDP) ու այդ կուսակցութեան նախագահի թեկնածու առաջադրուած Սելահատթիին Տէմիրթաշին:

Ձախակողմեան հայեացքներով, Թուրքիոյ մէջ կազմակերպած Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակման միջոցառումներով ու բազմաթիւ այլ նախաձեռնութիւններով յայտնի «Նոր զարթոնքի» յայտարարութեան մէջ ըստուած է.

«Այսօր Թուրքիոյ մէջ վերահսկողական բոլոր մեխանիզմներն ու դատական համակարգը խափանուած վիճակի մէջ են, բանտերը լեցուած են ընդդիմադիրներով, առաջատար լրատուամիջոցները կեղերնացած են կառավարութեան ձեռքը, խորհրդարանը քաղաքական գործընթացներէն դուրս ձգուած է: Արտակարգ դրութեան պատճառով երկիրը վերածուած է մէկ մարդու համակարգի: Խորացող տնտեսական ճգնաժամը իշխող «Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան» (ԱԿՔ-ԱԶԿ) կը ստիպէ բռնի ընտրութիւն իրա-

կանացնել»:

Նշուած է, որ Թուրքիոյ մէջ մարդու իրաւունքները, ժողովրդավարութիւնը, հաւասարութիւնը, արդարութիւնն ու նմանատիպ այլ արժէքները օր-օրի «կը մաշին»:

Նախաձեռնութեան յայտարարութեան մէջ անդրադարձ կայ նաեւ Պոլսոյ հայոց պատրիարքի ընտրութիւններու շուրջ ստեղծուած ճգնաժամին, ուր նշուած է, որ հայերը պետութեան կողմէ գրկուած են պատրիարք ընտրելու իրենց իրաւունքէն, իսկ Աթէշեանը նշանակուած է որպէս պետութեան դրածոյ:

Յայտարարութեան մէջ մտահոգութիւն կայ նաեւ հայկական եկեղեցիներու ու դպրոցներու պատերուն պարբերաբար յայտնուող ազգայնամոլական ու ցեղապաշտութեան գրութիւններու մասին:

«Այս ամբողջ բացասական պատկերի մէջ ԺԴԿ-ն (HDP) միակ ուժն է, որ կը փոխէ Թուրքիոյ մէջ տիրող իրավիճակը:

...Հեռուստատեսութեամբ ընդդիմադիր առաջնորդներու ելոյթներու գրաքննութեամբ, թեկնածուներու համար անհաւասար պայմաններով ու արտակարգ դրութեամբ ուղեկցուող այս ընտրութիւններուն մեր թեկնածուն ու մեր յոյսը կրկին Սելահատթիին Տէմիրթաշին է», - նշուած է յայտարարութեան մէջ:

Թուրքիոյ Արտաքին Խորհրդարանական Ընտրութիւններուն՝ Երեք Հայագգի Թեկնածու

Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի հայագգի երեք պատգամաւորներէն երկուքը՝ Կարօ Փայլանն ու Մարգար Եսայեանը պիտի առաջադրուին նաեւ 24 Յունիսին երկրի մէջ իրականացուելիք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն:

Փայլանը իր ֆէյսպուքեան էջին վրայ եռալեզու՝ հայերէն, քրտերէն ու թրքերէն գրառում ըրած է. «Բարեւ, Տիգրանակերտ: Հպարտ եմ Տիարպեքիւրէն թեկնածու առաջադրուելու կապակցութեամբ»:

Թուրքական «Սպաս» պարբերականի փոխանցմամբ, «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան պատգամաւոր Մարգար Եսայեանը առաջադրուած է Պոլսոյ երկրորդ շրջանի մէջ՝ 11-րդ համարի ներքոյ:

Ի տարբերութիւն Կարօ Փայլանի եւ Մարգար Եսայեանի, խորհրդարանի երրորդ հայագգի պատգամաւոր՝ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցութեան Սէլինա Տողանը չկայ յառաջիկայ ընտրութիւններուն առաջադրուած թեկնածուներու ցանկին մէջ:

Ուշագրաւ է, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն առաջին անգամ մասնակցող՝ Մերալ Աքէշէիի ղեկավարած ազգայնական «Լաւ» («İyi») կուսակցութեան ընտրացուցակի մէջ եւս հայագգի թեկնածու կայ: Ըստ թրքական լրատուամիջոցներու, կուսակցութեան հիմնադիր անդամներէն էլմաս Կիրակոսը առաջադրուած է Պոլսոյ երրորդ շրջանին՝ 8-րդ համարով:

«Ցեղասպանութիւն» Ըսելու Համար Կարօ Փայլանի Դեմ Հետաքննութիւն Սկսած է

Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլանի դէմ քրէական օրէնսգրքի տիրահաշակ 301-րդ յօդուածով հետաքննութիւն սկսած է:

Անգարայի հանրապետական դատախազութեան կողմէ կազմուած պահանջագրի մէջ նշուած է, որ Փայլանը Գանատայի հայկական «Horizon Weekly» պարբերականին տուած հարցազրոյցին մէջ յայտնած է, որ «Թուրքիոյ մէջ ցեղասպանութիւն իրականացուած է եւ այն դեռ կը շարունակուի»: Այս յայտարարութեան հետ կապուած հայ օրէնսդիրի դէմ բողոք ներկայացուցած է թուրք փրոֆէ-

սօր Այզիւն Աթարը: Պատգամաւորները իրաւունք ունին ինչպէս յանձնաժողովին, այնպէս ալ խորհրդարանի նիստի ժամանակ հանդէս գալ պաշտպանական խօսքով: Անձեռնմխելիութենէն գրկուելու պարագային անոնք կրնան հարցը բողոքարկել Սահմանադրական դատարանի մէջ:

Թուրքիոյ քրէական օրէնսգրքի 301-րդ յօդուածը կ'ենթադրէ քրէական պատասխանատուութեան ենթարկելի այն անձերը, որոնք կը վիրակտրեն թուրք ժողովուրդը, պետութիւնը, թուրքականութիւնը, երկրի պետական կառուցները, գինծառայողները եւ իրաւապահները:

«Քաղաքական Բանտարկեալներու Ազատ Արձակման Գործընթացը Սկսած» Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը մասնակցած է «Այ. Թի.» ձեռնարկութիւններու միութեան համագումարին եւ ապա պատասխանած է լրագրողներու հարցերուն:

Անդրադառնալով «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ժիրայր Սեֆիրեանի նամակին, որուն մէջ ան նշած էր՝ «քաղաքացիական շարժումներին ազատ շարձակելը յղի է վտանգներով», Նիկոլ Փաշինեան ընշած է.

«Քաղաքացիական շարժումները ազատարձակման գործընթաց նարդէն սկսուել է, եւ դա շարունակուած է: Մենք պէտք է յստակ արձանագրենք մի բան, որ չի կարելի բռնութեան սպառնալիքներով, բռնութեան սպառնալիքներ իրականացնելով խօսել ժողովրդի հետ: Ես յոյս ունեմ, որ մենք բոլորս հասկանում ենք, որ եթէ արձանագրուել է քաղաքական իրադրութեա փոփոխութիւն, այդ փոփոխութիւնը պէտք է արձանագրուի բոլորի պահով: Ես, որպէսզի մենք կարողանանք սիրոյ

եւ համերաշխութեան տրամաբանութիւնը շարունակել մինչեւ վերջ»:

Թէ արդեօք ինքը «ձեռքերը լուացել է» «Սանա ծոբերու» խնդիրէն, Նիկոլ Փաշինեան ըստապահանած է. «Նախ պէտք է ճշդել, թէ ինչ է նշանակում ձեռքերը լուանալ: Եթէ խօսքն այն մասին է, որ ես ասելեմ, որ չեմ պատրաստուում դատաւարներին հրահանգ տալ, ես հաստատում եմ իմ դիրքորոշումը»:

Ան նշած է, որ եթէ անհնազանդութեան բողոքները կ'ընեն լեղափոխութեան անունով, ապա պէտք է դադարեցնեն, որովհետեւ կառավարութիւնը նաեւ իրենցն է: «Իսկ եթէ դա արևում է Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդի վստահութիւնը վայելող կառավարութեան նկատմամբ, նշանակում է սաբոթաժ (խափանարարութիւն) ընել Հայաստանի ժողովուրդի նկատմամբ: Սիրոյ եւ համերաշխութեան լեղափոխութիւնը թուրքութիւ նանուանելը

Գլխաւոր Դատախազը՝ Զի Բացառել Բրեւական Գործերը Վերանայելու Հարցը

ՀՀ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը նկատած է, որ Հայաստանի մէջ իրադրութեան փոփոխութեան որպէս արդիւնք կան դատական վարոյթէն ներս գտնուող քրէական գործեր, որոնց համար կրնան կանգ առնել եւ իրողութեան փոփոխութեան քննարկում իրականացնել:

Արթուր Դաւթեանը նման յայտարարութեամբ հանդէս եկաւ Ազգային ժողովին 2017 թ. դատախազութեան գործունէութեան հաղորդման քննարկման ժամանակ՝ պատասխանելով «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Ալէն Սիմոնեանի հարցին: «Սակայն մենք պէտք է ունենանք համապատասխան անձի վարքագիծ, որը կը վկայէ, որ իրադրութեան փոփոխութիւնը բերել է հանրութեան համար նրա եւ նրա կատարած արարքի վտանգաւորութեան փոփոխութեան», - ընդգծած է Դաւթեանը:

Ան յայտարարած է, որ իրաւապաշտպաններու հետ կրնան քննարկել, հասկնալ, թէ ստեղծուած իրադրութեան փոփոխման պայմաններու մէջ ինչպիսի՞ իրաւակարգաւորումներու տիրոջ թիւն մէջ ո՞ր խնդիրները կրնան նոր լուծումներ ունենալ: «Ի

հարկէ, մենք առաջիկայում ինքներս որոշակի այդպիսի քննարկումներ կը նախաձեռնենք», - ըսած է ան:

Ալէն Սիմոնեանը խնդրեց ՀՀ գլխաւոր դատախազէն մանրամասնել, թէ ի՞նչ նկատի ունի, երբ կ'ըսէ, որ իրադրութիւնը փոխուած է, քանի որ անհասկանալի է, թէ իրադրութեան փոփոխութիւնը ի՞նչ կապ կրնայ ունենալ յարուցուած քրէական գործերու հետ:

Արթուր Դաւթեանը մանրամասնած է, որ կան քրէական գործեր, որոնցմով անցնող մարդիկ կը նախապատրաստէին զանգուածային անկարգութիւններ իրականացնել, պետութեան կը ներկայացնէին պահանջներ, դատական նիստերու ընթացքին զինուած գործողութիւնները շարունակելու կոչեր կը հնչեցնէին՝ անձաւորելով պաշտօնատար անձերու: «Մենք այսօր չունենք այդ պաշտօնատար անձանց: Եւ սա չի՞ վկայում, արդեօք, որ այդ անձանց յետագայ վարքագիծը առումով մենք իրավիճակի փոփոխութիւն ունենք: Սակայն այստեղ շատ կարեւոր է, որ դրա արդիւնքում կոնկրետ անձի եւ նրա կատարած արարքի վտանգաւորութիւնը հանրութեան համար նուազի», - եզրափակած է Արթուր Դաւթեանը:

# 100 Տարի Ազգային Ինքնահաստատման Գանապարհին

## ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության ծնունդը Հայ ժողովրդի համար եղաւ երկունքի դաժան ցաւերով:

Դարեր շարունակ պետականութիւնից զրկուած. ժողովրդիս, ցեղասպանութեան ահապառարկող ցաւի ներքոյ, բաժին հասաւ Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրումը եւ կազմաւորումը:

Հայի ինքնութեան գենետիկայում, Սարգարապատեան համախմբման եւ ինքնակազմակերպման բաղադրիչը աշխատեց ամբողջ թափով, անհաւատալի հերոսութեամբ մարտնչելով թշնամու տասնապատիկը գերազանցող զինուած հրոսակախմբի դէմ, նրան ջախջախելով հեռու շարտեց իր սրբազան հողից: Նուաճեց իր արժանապատիւ ապրելու իրաւունքը համաշխարհային հանրութիւնում:


Սարգարապատեան յաղթանակը դարձաւ անկիւնաքար իմաստաւորելու եւ վերարժեւորելու մեր ներքին, մտաւոր եւ բարոյագրբանական ռեսուրսները: Ցեղասպանութիւն տեսանք բայց ցեղասպան չեղանք: Հայ մարդու տեսակը իր տեղը պիտի գտնէր ոչ թէ թանգարանում այլ մարդկութեան ճակատագիրը կերտողների առաջնագծում:

Հայաստանի պետական-կերտման գործին լծուել էին նուիրակաւ գործիչներ, որոնք անձուրաց նուիրուածութեամբ էին կատարում իրենց առաքելութիւնը:

Աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, ճշգրիտ որոշումներ կայացնելիս հարկ էր լինում, ունկնդրել հայրենի մտաւորականութեան ձայնին, ամենայն հայց բանաստեղծ թումանեանի «Վերնատան» յորդորներին ու ուղերձներին:

Անշուշտ այս պարագայում յաճախակի յաջողութիւն էր գրանցւում, երբ «հոգեւոր խորհրդի» ձայնը լսելի էր լինում: Իսկ հակառակ դէպքում, երբ խմբակային շահերի բախման յորձանուտում էին յայտնւում, եւ ազգային շահը եւ հայրենիքի ապագան դառնում էր առեւտրի առարկայ: Հայրենակերտման սրբազան գործը ձախողում էր:

Այսպէս կերտեցինք Հայաստանի առաջին հանրապետութիւնը, իր պետական բոլոր ատրիբուտներով: Նոր էջ բացուեց ոչ միայն գոյատեւման իրաւունքը նուաճելու, այլ Հայ ժողովրդի հզօր ու պայծառ ապագան կերտելու սպա-



սումով: Իսկ աւաղ աշխարհաքաղաքական նոր իրողութիւնների պատճառով, ինչպէս նաեւ ղեկավարութեան կողմից սթափ չգնահատելով այդ իրողութեանները ինչպէս նաեւ մեծ խաղաղողների խարդաւանքների պատճառով, Հայաստանի առաջին հանրապետութեան էջը որոշ կորուստներով փակուեց, փոխարինելու եկաւ խորհրդային Հայաստանը:

Ծանր եւ խիստ պատասխանատու գործ է, առաջին հանրապետութիւնից երկրորդ հանրապետութիւն անցումային փուլի բոլոր ծալքերի լուսաբանումը, պատճառահետ եւ անքային կապերի ամբողջական բացայայտումը: Ուստի թողնելով այն խիստ արհեստավարժ վերլուծաբաններին, միայն մատնանշելք Գարեգին Նժդեհի եւ Ալեքսանդր Միասնիկեանի մասին մի դրուագ:

Չնայած այն բանին, որ աշխարհաքաղաքական դասաւորումների առումով նրանք պատկանում էին տարբեր ճանապարհների, բայց տառապում էին նոյն ցաւով՝ հայրենիքի վաղուայ օրով: Գարեգին Նժդեհը Ալեքսանդր Միասնիկեանի հետ վերջին հեռախօսակապից յետոյ խոստովանում է, որ այլեւս հայրենիքից իր պարտադիր հեռանալը կատարում է հանգիստ խղճով: Այսինքն հայրենի թշուառ ժողովրդի ճակատագիրը գտնում է յուսալի ձեռքերում:

Խորհրդային Հայաստանի շուրջ 70 ամեայ պատմութիւնը ունեցաւ բազմաթիւ եւ բազմապիսի ցաւալի գործընթացներ:

Հայրենիքից վտարուեցին հայ աւանդական կուսակցութիւններ եւ բազմաթիւ նուիրեալ ազատամարտիկներ:

Բազմաթիւ գրկանքներով, աքսորներով, հայ ժողովրդի պատմութիւնը թեւակոխեց խորհրդային նոր աշխարհակարգի տրամաբանութեամբ ձեւաւորուած երկրորդ հանրապետութիւնը: Այս մէկը մասն էր կազմում Ռուսաստանի Սոցիալիստական յեղափոխութեամբ առաջացած խորհրդային միութեան հանրապետութիւնների շարքում:

Չնայած այն բանին, որ խորհրդային Հայաստանը մեծ ու բազմաթիւ մարտահրաւէրների դիմագրաւեց, այդ թւում երկրորդ աշխարհամարտի արհաւիրքները «Ստալինեան շրջանի ռեպրեսիաները: սակայն, հասցրեց մեծ յաջողութիւններ արձանագրել» գիտութեան, շինարարութեան, մշակոյթի, սպորտի եւ այլ բնագաւառներում:

Մարդկութեանը երջանիկ ապագայ խոստացող ընկերվարական համակարգը, չկարողացաւ խոստացած երազները իրականութիւն դարձնել:

Համայնավար կուսակցութեան դիկտատուրան, կորցրեց իր կառուցողական կենսունակութիւնը եւ քայքայեց ընկերվարական հասարակարգի առողջ հիմքերը:

1988 Արցախեան գոյամարտի հիմքում առաջացած համաժողովրդական շարժումը մի հակադասական էներգիա առաջացրեց համահայկական գետնի վրայ, որ խաղաղ եւ քաղաքակիրթ պայմաններով համայնավար կուսակցութիւնը յանձն առաւ իր պարտութիւնը: Համայնավարական վարչակարգի լուծը թօթափելուց յետոյ մարմին ստացաւ Հայկական Յրդ Հանրապետութիւնը: Խորհրդային միութիւնից անկախ ու ազատ հանրապետութիւն:

Հայաստանի Յրդ Հանրապետութիւնը, որի ղեկավարութիւնը

ընտրուել էր բացառիկ պարզ ու արդար ընտրութեամբ, ահեղ մարտահրաւէրներին դիմակայելով հանդերձ նրանք էին զարհուրելի երկրաշարժը պատերազմը եւ շրջափակումը: Հայ ժողովուրդը արձանագրեց նոր պատմական ձեռքբերումներ: Անցեալից եկած զոհի կամ գոյատեւողի կարծրատիպը յաղթահարելով, Արցախեան գոյամարտում, առաջին անգամ հողեր ազատագրեց:

Ժողովուրդը բարոյահոգեբանական առումով որակապես նոր կարգավիճակի հասաւ: Այն է, որ կարող է ազատուել հին կարծրատիպից եւ ստանալ իր հասանելիքը: Իհարկէ ժողովրդավարական եւ բարոյահոգեբանական այդ նուաճումները երկար չտեւեց:

1995-թուից սկսուեց ընտրութիւնները. կեղծուել, այնուհետեւ կոռուպցիոն վարչակարգ ձեւաւորուել:

Ահա 2018 թուի Ապրիլին համաժողովրդական շարժման շնորհիւ պատմութեան մի նոր էջ բացուեց Հայաստանի եւ հայ ժողովրդի համար, բայց ձեռքերով առանց արեան, յեղափոխութիւն կատարուեց, կոռումպացուած ռեժիմի առաջնորդ Սերժ Սարգսեանը հրաժարական տուեց, խոստովանելով, որ շարժման արաջնորդ «Նիկոլը ճիշտ էր, եւ ինքն էր սխալը»:

Այս «Նոր Հայաստանի» շէմին մուտք գործած, կարելի է աւելի վստահ եւ իմաստնացած շնորհաւորել Հայաստանի առաջին հանրապետութեան ծնունդը, ազգային ինքնահաստատման 100-ամայ ուղին թող շարունակուի մեծ նուաճումներով: Յիշենք, որ Հայը Մոլենտիկեան առաքելութիւն ունի ոչ միայն իրեն այլ նաեւ ողջ աշխարհի հանդէպ: Լոս Անճելըս

**Արեւմտեան Ամերիկայի Հայ Համայնքը Միասնաբար Կը Տօնախմբէ Առաջին Հանրապետութեան 100-մեակը**

Արեւմտեան Ամերիկայի տարածքին գործող հայկական ազգային երեք կուսակցութիւններն ու հայոց եկեղեցւոյ բոլոր յարանուանութիւնները յառաջացոցած են միացեալ յանձնախումբ մը, որ պիտի կազմակերպէ Առաջին Հանրապետութեան 100եակի տօնախմբութիւնը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական կուսակցութեան Արեւմտեան շրջանի ղեկավար մարմիններու, եւ Հայոց առաքելական, կաթոլիկ եւ բողոքական եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդներու նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ գործի լծուած յանձնախումբը ամեն ճիգ պիտի թափէ այս նշանակալի տաեդարձը պատշաճ շուքով տօնելու:

Տօնախմբութեան թուականի, վայրի եւ այլ մանրամասնութիւններու մասին հանրութիւնը տեղեակ կը պահուի յետագայ հաղորդագրութիւններով:

**ՆՈՐ ՍԱՐԴԱՐԱՊՈՍ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Մե'ր Հայաստանը  
Թող կրկին Հայաստան ըլլայ ...  
Մեր հին երազը՝ իրական դառնայ.  
Ազատութեան բոյն ու մեր սիրոյ տուն  
Մեր հայրենիք Հայաստանը՝  
Թող կրկին Հայաստան դառնայ:

Մեր նոր երգով ու նոր յոյսով  
Եւ Սրբազան քաջերու մեր նոր կանչով ...  
Մեր նոր Սարգարապատով,  
Մեր հայրերու անուր կանքով  
Մեր սու'րբ հայրենիք Հայաստանը՝  
Թո'ղ կրկին Հայաստան դառնայ:

Մեր երազով, արդար յոյսով,  
Ժողովուրդի իր ոգոյանցով,  
Հայրենիքը մեր հին-հզօր  
Դառնայ ազատ, դառնայ պարարտ  
ու նոր դառնայ Հայաստանը՝  
մեր նոր դաւշեայ իր գարթօնքով:

# Սարդարապատի ճակատամարտի 100-Ամեակ Մայիս 22-29, 1918

Սարդարապատի 9-օրեայ ճակատամարտն աւարտուեց հայերի լիակատար յաղթանակով, որի արդիւնքում հակառակորդը ջախջախուեց ու հետ շարտուեց 50-65 կմ, վերացուեց Երեւանին սպառնացող անմիջական վտանգը: Յաղթանակը վճռական դեր խաղաց Արեւելեան Հայաստանի դէմ թուրքական զորքերի արշաւանքի մասնակի ձախողման եւ, մասնաւորապէս միւս ճակատներում՝ Բաշ-Ապարանում յաղթական հակահարուածի եւ Ղարաքիլիսայում հերոսական պաշտպանութեան ապահովման գործում: Սարդարապատի հերոսամարտը տեղի բնակչութեանն ու արեւմտահայ գաղթականներին փրկեց անխուսափելի ջարդերից: Կազմակերպչական մեծ ջանքերի գնով տարած յաղթանակը նպաստեց նաեւ Երեւանում գործող քաղաքական ու հասարակական կազմակերպութիւնների, ինչպէս նաեւ տեղի ղեկավար մարմինների ու առաջատար գործիչների դերի ամրապնդմանը փաստացի հիմք դրուեց նորահունչ Հայաստանի Հանրապետութեան կայացմանը:

1918 թ. Փետրուարին յարձակման անցնելով՝ թուրքական 3-րդ բանակը յաջորդաբար սկսեց գրաւել Արեւմտեան Հայաստանի բնակավայրերը: Ապրիլին՝ Տրապիզոնի հաշտութեան բանակցութիւնների ձախողումից յետոյ 3-րդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան զորքերը շարժեց դէպի Անդրկովկաս: Նորահունչ Անդրկովկասի Դաշնային Հանրապետութեան ղեկավարութեան գիշորական քաղաքականութիւնից օգտուելով՝ թուրքական զորքերը Ապրիլի 25-ին գրաւեցին նաեւ Կարսի լաւ ամրացուած ամրոցը՝ անմիջական սպառնալիք ստեղծելով Ալեքսանդրապոլի համար: Կարսի գրաւումից յետոյ օսմանեան զորքերի հրամանատարութիւնը Անդրկովկասի իշխանութիւնների առջեւ նոր պայմաններ առաջ քաշեց՝ Ախալքալաքի, Ախալցխայի եւ Ալեքսանդրապոլի, ինչպէս նաեւ Ալեքսանդրապոլ-Ձուլֆայ երկաթգծի յանձնում, որով թուրքական զորքերը կարող էին փոխադրուել դէպի Թաւրիզ եւ Անդրկովկասեան բոլոր երկաթուղիներն ազատ օգտագործել մինչեւ բրիտանացիների դէմ պատերազմի աւարտը: Չսպասելով Բաթումում Անդրկովկասի պատուիրակութեան հետ բանակցութիւնների աւարտին՝ թուրքական զորքերն արագ յարձակումով Մայիսի 15-ին գրաւեցին նաեւ Ալեքսանդրապոլը՝ նուաճման սպառնալիք ստեղծելով ամբողջ Արեւելեան Հայաստանի համար:

Արեւելեան Հայաստան ներխուժելու համար թուրքական ռազմական հրամանատարութիւնը կատարեց զորքերի վերախմբաւորում: 3-րդ բանակի 1-ին կովկասեան բանակային կորպուսի (հրամանատար՝ գեներալ-մաեօր Քեզզըմ Կարաբեքիր փաշա) եւ 2-րդ կովկասեան բանակային կորպուսի (հրամանատար՝ գեներալ-մաեօր Յակուբ Շեւքի փաշա) ստորաբաժանումներից կարսում ստեղծուեց յատուկ զորախումբ՝ Յակուբ Շեւքի փաշայի ընդհանուր հրամանատարութեամբ: Այդ զորախումբի կազմում հայկական ուժերի դէմ գործելու էին 1-ին կովկասեան բանակային կորպուսի 36-րդ դիւիզիան



(հրամանատար՝ գնդապետ Փիրսելիմօղլու Համդի բեյ)՝ Ալեքսանդրապոլ-Երեւան ուղղութեամբ, եւ 9-րդ դիւիզիան (հրամանատար՝ գնդապետ Ռուշթու փաշա)՝ Ալեքսանդրապոլ-Համամլու-Բաշ-Ապարան-Երեւան ուղղութեամբ, եւ 2-րդ կովկասեան բանակային կորպուսի 11-րդ դիւիզիան (հրամանատար՝ գնդապետ Զաւիդ էրդեմ)՝ Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսայ-Դիլիջան-Ելիզաւետպոլ ուղղութեամբ, 5-րդ դիւիզիան (հրամանատար՝ գնդապետ Միւրսեմ)՝ Ալեքսանդրապոլ-Վորոնոյովկայ-Թիֆլիս ուղղութեամբ: Այդ զորախումբից բացի դէպի Արեւելեան Հայաստան արշաւանքի ռազմական գործողութիւններին մասնակցում էր նաեւ 2-րդ բանակի 4-րդ բանակային կորպուսի 12-րդ դիւիզիան, որը Սարդարապատի ճակատամարտի նախօրեակին հսկում էր Սուրմալուի լեռնանցքները եւ մարտական առաջադրանք ունէր ներխուժելու Իզդիրի շրջան:

Հակառակորդի յարձակմանը դիմակայելու համար Հայկական կորպուսի հրամանատար, հայկական զինուած ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ-մաեօր թովմաս Նազարբեկեանը որոշեց պաշտպանել դէպի Երեւան եւ Թիֆլիս տանող ռազմավարական նշանակութեան երկու ճանապարհները:

Ալեքսանդրապոլից դուրս եկած հայկական ուժերի մի մասը՝ Հայկական կորպուսի 1-ին դիւիզիայի որոշ ստորաբաժանումներ, ինչպէս նաեւ Հայկական յատուկ հաւաքական ջոկատի կազմում եղած մի քանի ստորաբաժանումներ, Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղութեամբ նահանջեց դէպի Արարատեան դաշտ: Այստեղ Մովսէս Սիլիկեանի ընդհանուր հրամանատարութեամբ ձեւաւորուեց հայկական զորքերի երեւանեան զորախումբը, որի առջեւ դրուեց Երեւանի ուղղութեամբ թուրքական յարձակումը հետ մղելու խնդիր:

Թուրքական զորքերի արշաւանքը ծանր կացութեան մէջ դրեց հայկական քաղաքական ղեկավարութեանն ինչպէս Թիֆլիսում, այնպէս էլ Երեւանում: Մայիսի 19-ին՝ Սուրմալու ներխուժելուց յետոյ, թուրք գեներալ Հալիլ բեյը (էնուներ փաշայի հօրեղբայրը) Բաթումում յայտարարեց, թէ հայերը պարտուած են եւ պետք է ենթարկուեն: Միւս կողմից, Բաթումի բանակցութիւններում հայկական պատուիրակութիւնը (Ալեքսանդր խատիսեան, Յովհաննէս Քաջագ-

նունի) Անդրկովկասի կառավարութեան հայ անդամ խաչատուր Կարճիկեանին յրաժ հեռագրով խորհուրդ էր տալիս ռազմական դիմադրութիւն ցոյց չտալ թուրքերին:

Թուրքական զորքերի յարձակման հետեւանքով Ալեքսանդրապոլի գաւառում, Արարատեան դաշտում ու Երեւանում տիրող խուճապի արդիւնքում Երեւանի քաղաքային խորհուրդը Մայիսի 18-ի ընդլայնուած նիստում ընդունեց Երեւանի քաղաքապետի թաղեւոս թոշեանի առաջարկութիւնը՝ քաղաքն առանց դիմադրութեան թուրքերին յանձնելու, քաղաքի բնակչութիւնը տարահանելու եւ Քանաքեռի բարձունքում դիրքաւորուելու վերաբերեալ: Սակայն Երեւանը յանձնելու մասին ընդունուած որոշումը գործնական հետեւանք չունեցաւ, քանի որ Երեւանում Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի լիազօր գործադիր մարմինը՝ Յատուկ կոմիտէն, Երեւանի ազգային խորհրդի ղեկավար Արամ Մանուկեանի գլխաւորութեամբ կտրուկ դէմ հանդէս եկաւ նման զարգացմանը եւ բեկանեց այդ որոշումը (Երեւանում եւ Երեւանի նահանգում փաստացի գերագոյն իշխանութիւնը պատկանում էր Յատուկ կոմիտէին): Շուրջ 1500 բնակիչների օգնութեամբ Արամ Մանուկեանի հրահանգով Երեւանի մատուցները պաշտպանական ամրութիւններով ապահովելու աշխատանքներ տարուեցին, մասնաւորապէս, Եռաբլրի տարածքում:

Մայիսի 18-ին Արամ Մանուկեանը Երեւանի պարէտ Արշաւի Շահխաթունու ուղեկցութեամբ այցելեց Էջմիածին՝ կաթողիկոս Գէորգ 5-րդին յորդորելու անվտանգութեան նկատառումներով ժամանակաւորապէս թողնել Էջմիածինը եւ մեկնել Բիւրական[10]: Սակայն կաթողիկոսը ոչ միայն կտրուկ հրաժարուեց, այլեւ զորքին կոչ արեց վճռական դիմադրութիւն ցոյց տալ հակառակորդին:

Ալեքսանդրապոլ-Երեւան ուղղութեամբ արշաւող թուրքական 36-րդ դիւիզիայի կազմում էին 106-րդ, 107-րդ եւ 108-րդ հետեւակ զնդերը, հրաձգային մէկ գումարտակ, երկու հրետանային դիւիզիան: Թուրքական զորքն ուժեղացում էր կորպուսային առանձին հեծալազորային զնդի եւ քրդական 1 500-ոց հեծեալ զնդի ուժերով: Թուրքական ուժերի ընդհանուր թուաքանակը կազմում էր 7 500 - 10 000 զինուոր ու սպայ՝

ներառեալ քրդական ուժերը: Թուրքերի տրամադրութեան տակ կար 40 հրանօթ:

Հայկական զորքերի հրամանատարական կազմը: Մէջտեղի շարքում ձախից աջ՝ Դրաստամատ Կանայեան, Մովսէս Սիլիկեան, Թոմաս Նազարբեկեան, Դանիէլ-Բեկ Պիրումեան:

Սարդարապատի ճակատում հայկական կողմի ուժերն ընդգրկուած էին Երեւանեան զորախումբի կազմում, որի ստորաբաժանումների միւս մասը մասնակցեց թուրքական 9-րդ դիւիզիայի դէմ Բաշ-Ապարանի ճակատամարտին: Զորախումբի հրամանատարն էր գեներալ-մաեօր Մովսէս Սիլիկեանը, շտաբի պետը՝ գնդապետ Ալեքսանդր Վեքիլեանը: Շտաբը վաղարշապատում էր՝ Էջմիածինի Գէորգեան հոգեւոր ձեռնարանի շէնքում: Սարդարապատի ճակատում կռուող ուժերի ընդհանուր հրամանատարը Երեւանեան զորախումբի հրամանատարի տեղակալ գնդապետ Դանիէլ Բեկ-Փիրումեանն էր, շտաբի պետը՝ կապիտան Ալեքսանդր Շենուրը: Ներառուած էին Հայկական կորպուսի 2-րդ դիւիզիան՝ ոչ լրիւ կազմով, եւ Հայկական յատուկ հաւաքական ջոկատի (1917 թ. վերջին արեւմտահայ կամաւորականներից կազմուած զորախումբ, նախքան Սարդարապատի ճակատամարտը կռուել է կովկասեան ճակատում) կազմում եղած մի քանի ստորաբաժանումներ: 2-րդ դիւիզիայի (հրամանատար՝ Մովսէս Սիլիկեան) կազմում էին 5-րդ (3 գումարտակի կազմով, հրամանատար՝ գնդապետ Պօղոս-Բեկ Փիրումեան) եւ 6-րդ (12 վաշտ, հրամանատար՝ փոխգնդապետ Աբրահամ Դուրախանեան) զնդերը, 2-րդ հեծեալ գունդը՝ 4 հեծելավաշտով (գնդապետ Ջալինեան), պարտիզանական հետեւակ գունդը՝ 8 վաշտով (գնդապետ Ալեքսէյ Պերէկրեստով), պարտիզանական հեծեալ գունդը՝ 3 վաշտով (գնդապետ Կորոլկով), սահմանապահ գումարտակը (փոխգնդապետ Սիլիկ), 2-րդ դիւիզիայի շտաբի պարեկային վաշտը: 1-ին դիւիզիայի 4-րդ զնդի մէկ գումարտակ կանգնած էր Դաւալում՝ որպէս հարաւային ուղղութեան պաշտպանական զորաջոկատ:

Հայկական յատուկ հաւաքական ջոկատի ստորաբաժանումներից Երեւանեան զորախումբի կազմում ընդգրկուել էին 3-րդ յատուկ բրիգադից վաշտի 1-ին (գնդապետ Յուզբաշեւ) եւ 2-րդ (գնդապետ Ջախմախշեւ) հետեւակ զնդերը՝ 2-ական գումարտակով (տեղակայուած էին Իզդիրի շրջանում), Մակուի գումարտակը, 2-րդ յատուկ հեծեալ՝ 2էյթունի գունդը (4 հեծելաւաշտ, գնդապետ Սալիբեկեան), 2-րդ յատուկ բրիգադի զորամասերը՝ խնուսի եւ Կարաքիլիսայի (գիւղաքաղաք հին Բայազետի գաւառում) հետեւակային զնդերը (գնդապետ Կազիմիրսկի), 1-ին յատուկ բրիգադից՝ Երզնկայի գունդը (6 վաշտ, հրամանատար՝ Կարապետ Հասան-Փաշայան), ինչպէս նաեւ 1-ին յատուկ հեծեալ գունդը (հրամանատար՝ զորային աւագ Պաւել Զոլոտարեով):

Երեւանեան զորախումբի կազմում կար հրետանային 5 մարտկոց՝

# Սարդարապատի ճակատամարտի 100-Ամեակ Մայիս 22-29, 1918

Շարունակուած էջ 6-էն

գնդապետ Քրիստափոր Արարատեանի ընդհանուր հրամանատարութեամբ: Զօրախմբի կազմում ճակատամարտին մասնակցեցին նաեւ արեւմտահայ ու արեւելահայ կամաւորականների մի քանի շուկատներ (Թուուցիկ Յովսէփի, Մակեդոնի, Բուլանըիցի Մուրադի եւ ուրիշների հրամանատարութեամբ), եզդիների հեծեալ գումարտակը (հրամանատարներ՝ Ուսուբ բեկ եւ Զանգիր աղա), մեծ թուով աշխարհագորայիներ: Հայկական զօրքերի ընդհանուր թիւը ճակատամարտի առաջին օրերին կազմում էր շուրջ 9 000 - 10 000 զինուոր ու սպայ, իսկ ուժերի մի մասը Բաշ-Ապարանի ճակատ տեղափոխելուց յետոյ՝ շուրջ 6 000 - 6 500: Հայերն իրենց տրամադրութեան տակ ունէին 28 հրանօթ, որոնցից 16-20-ն են օգտագործուել ուսուցական գործողութիւններում:

Ալեքսանդրապոլի գրաւման նախօրէին Ախուրեան գետի երկայնքով ձգուող ճակատում կանգնած հայկական շուկատների հիմնական խնդիրները էր Ալեքսանդրապոլից դէպի Երեւան եւ դէպի Թիֆլիս տանող երկաթգծերն ու ճանապարհները պաշտպանելը: Ալեքսանդրապոլի անկումից յետոյ թուրքական զերազանցող ուժերի առաջխաղացման պատճառով այդ շուկատները ստիպուած էին նահանջել՝ մի մասը դէպի Համամուրաբաքիլիսայ, միւսները՝ դէպի Արարատեան դաշտ: Մայիսի 19-ին թուրքական 36-րդ դիւիզիան, Ախուրեանի մերձակայ Ղարաղուլա կիսակայարանը գրաւելով, ուսումներով շարժուեց Երեւանի ուղղութեամբ: 2-րդ յատուկ բրիգադի ստորաբաժանումների մի մասը՝ Խնուսի եւ Կարաքիլիսայի հետեւակային գնդերից, ինչպէս նաեւ 1-ին յատուկ բրիգադի մի մասը (Երզնկայի հետեւակ գունդը եւ այլ զօրամասեր) Մայիսի 16-19-ը Ախուրեանի ձախ ափից՝ Անի եւ Արագած կայարաններից, երկաթգծի երկայնքով աստիճանաբար հետ քաշուեցին դէպի Սարդարապատ: Նահանջի ընթացքում, դեռեւս նախքան թուրքական հիմնական ուժերի հետ մարտի բռնուելը, նրանք թիկունքից ու թեւերից կրակային հարուածներ էին ստանում 36-րդ դիւիզիայի առաջապահ քրդական հեծելազօրի կողմից: Ալեքսանդրապոլ-Երեւան ճանապարհով հայկական այդ զօրամասերի կազմակերպուած նահանջը կարեւոր դեր խաղաց Երեւանեան զօրախմբի համար ժամանակ շահելու եւ ուժերի վերախմբաւորում կատարելու համար: Դեռեւս Մայիսի 16-17-ին Երեւանեան զօրախմբի՝ Սարդարապատի շրջանում տեղակայուած զօրաշուկատների մի մասը շտապ ուղարկուեց Արաքս եւ Ղարաբուրուն կայարաններ՝ դէպի Արարատեան դաշտ արշաւող թուրքերին դիմադրելու համար, իսկ որոշ շուկատներ ուղարկուեցին Երեւան՝ կամաւորներով ու զինամթերքով համալրուելու եւ մարտերին պատրաստուելու համար:

Ստեղծուած պայմաններում Հայկական կորպուսի հրամանատար թովմաս Նազարբեկեանի եւ կորպուսի շտաբի պետ գնդապետ Եւգենի Վիշինսկու հրամանով կա-



տարուեց հայկական ուժերի վերախմբաւորում ու վերադասաւորում: Նպատակն էր թուրքերի յարձակումները կանգնեցնել առանձին շրջաններում՝ Ալեքսանդրապոլ-Սարդարապատ ուղղութեամբ եւ Ղարաքիլիսայում: Մայիսի 19-ին շտաբից ստացած հրամանի համաձայն գեներալ Մովսէս Սիլիկեանը որոշեց իր տրամադրութեան տակ եղած ուժերը կենտրոնացնել Էջմիածնի շրջանում եւ հակադարձակման միջոցով կանխել թուրքերի յարձակումը Երեւանի վրայ: Մայիսի 20-ին հայկական առաջապահ ուժերը ստիպուած թողնեցին Արաքս եւ Ղարաբուրուն կայարանները, նահանջեցին նաեւ երկաթգծից հիւսիս ընկած նախալեռնային շրջաններից՝ Մաստաբաքից, Թալինից, Աշնակից՝ կենտրոնանալով Սարդարապատում: 1-ին յատուկ բրիգադի նահանջող զօրամասերը՝ Երզնկայի գունդը եւ Խնուսի գնդից կէս վաշտ (Կարապետ Հասան-Փաշայանի ընդհանուր հրամանատարութեամբ), Մայիսի 20-ի երեկոյան Սարդարապատից տեղափոխուեցին աւելի խորք ու տեղակայուեցին Խզնաուզ գիւղում՝ Էջմիածնից մօտ 6 կմ:

Ալեքսանդրապոլ-Երեւան ուղղութեամբ թուրքական զօրքերի արշաւանքի հետեւանքով Սուրմալուն պաշտպանող հայկական շուկատների համար ստեղծուեց Երեւանեան զօրախմբի հիմնական ուժերից կտրուելու եւ շրջապատուելու վտանգ: Մայիսի 18-ին հակառակորդը յարձակուեց Կողբի հայկական ուժերի վրայ: Սիլիկեանի հրամանով մարտով նահանջեցին դէպի Կարակալայի կամուրջ: Մայիսի 19-ին թուրքական 4-րդ կորպուսի զօրամասերը՝ հիմնականում 12-րդ հետեւակային դիւիզիան, Բայազետի շրջանից ներխուժեցին Սուրմալու՝ այն գրաւելուց յետոյ Արաքսը գէտանցելու եւ Երեւանեան զօրախմբի թիկունք դուրս գալու նպատակով: Իգդիրից հարաւ ընկած լեռնանցքներում ու բարձունքներում որոշակի դիմադրութիւնից յետոյ հայկական ուժերը (Վանի 1-ին եւ 2-րդ գնդերը) ստիպուած նահանջեցին Իգդիր, այնուհետեւ, Երեւանեան զօրախմբի հրամանատարութիւնից այն թողնելու հրաման ստանալով, Մայիսի 20-ին առանց մարտի նահանջեցին ու Մարգարայի կամուրջով անցան Արաքսի ձախ ափ՝ իրենց հետեւից այրելով այդ եւ Կարակալայի կամուրջները: Այդպիսով Սուրմալուն գրաւած թուրքական զօրքերը Սարդարապատի ուսումնաբեմից կտրուած մնացին: Հայկական կողմից կամուրջների մօտ տեղի կամաւորների միջոցով ամուր

պաշտպանութիւն կազմակերպուեց, որը ձախողեց ճակատամարտի օրերին գէտանցելու եւ հայերին թիկունքից հարուածելու թուրքական փորձերը:

Ռազմաճակատի թիկունքը հարաւից պահովելու՝ Դաւալուի ուղղութեամբ կամ Շարուրի կողմից Արաքսը գէտանցելով թուրքական յարձակումը կանխելու համար Սիլիկեանի հրամանով այդ կողմում ծաւալուեց 3-րդ յատուկ բրիգադի ստորաբաժանումների մի մասը, որի գլխաւոր ուժը Վանի 4-րդ գունդն էր (բրիգադի հրամանատար՝ գնդապետ Տիգրան Բաղդասարեան):

1920 թ. հոկտեմբերի 30-ին թշնամին գրաւեց Կարսը՝ գերելով մօտ 3.000 զինուորների եւ գինուորական ու քաղաքացիական բարձրաստիճան անձանց: Երեք օր անընդմէջ թուրքերը Կարսում գրաւուած էին իրենց յատուկ վայրագութիւններով, որոնց զոհ գնացին մօտ 6000 հայեր:

1920 թ. նոյեմբերի 18-ին կնքուեց գինադադարի համաձայնագիր, որի պայմանները խիստ ծանր էին ՀՀ համար:

1920 թ. նոյեմբերի 23-ին Համագաւա Օհանջանեանի կառավարութիւնը հրաժարական տուեց եւ կազմուեց նորը՝ Սիմոն Վրացեանի գլխաւորութեամբ: Այն կոալիցիոն էր եւ կազմուած էր հսեռների հետ:

1920 թ. նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսուեցին հայ-թուրքական հաշտութեան բանակցութիւններ, որոնք աւարտուեցին դեկտեմբերի 2-ի լոյս 3-ի գիշերը, այն բանից յետոյ, երբ Հայաստանն արդէն խորհրդայնացել էր, իսկ ՀՀ կառավարութիւնը հրաժարուել էր իշխանութիւնից: Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրքիային էր անցնում 1914 թ. դրութեամբ Արեւելեան Հայաստանի մէջ մտնող աւելի քան 20.000 կմ. տարածք՝ Կարսը, Սարիղամիշը, Կաղզուանը, Արդահանը, Օլթին, Սուրմալուի գաւառը: Փաստօրէն հայ-թուրքական սահմանն անցնելու էր Ախուրեան եւ Արաքս գետերի հունով: Իսկ Նախիջեւանի, Շարուրի, Շահթախթի շրջանները ժամանակաւորապէս յանձնուեցին թուրքիային, մինչեւ որ այնտեղ կ'անցկացուէր հանրաքուէ, որին Հայաստանը չպէտք է մասնակցեր:

1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակը եւ Բաքում կազմաւորուած Հայաստանի ռազմալեզափոխական կոմիտէն, որի նախագահն էր Սարգիս Կասեանը, մտան Իջեւան, որտեղ յայտարարեցին դաշնակցական կառավարութեան տապալման եւ Հայաստանի խորհրդայնացման մասին:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրուեց Համաձայնագիր: Դրանով Հայաստանը հռչակուեց իր խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն, իշխանութիւնը անցնում էր ժամանակաւոր ռազմալեզափոխական կոմիտէին:

**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

**WELCOME HOME & AUTO INSURANCE**  
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE  
**(818) 500 9305**

# Պանդուխտ Սարդարապատի ճակատամարտին Մեջ

## ԵՂԻԿ ԵՐԵՆԵԱՆ

18 Մայիս 1918ին, թրքական բանակները Ալեքսանդրապոլին յառաջ կը շարժին երեք ուղղութիւններով՝ Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսէ:

Եաքուպ Շեւքի փաշայի հրամանատարութեամբ գործող թրքական բանակը եւ անոր թիկունքի քրտական անկանոն զօրագունները, ընդհանուր հաշուով շուրջ 6000 կռուող, Շիրակի եւ Արարատեան դաշտերով կը յառաջանան դէպի Էջմիածին եւ Երեւան:

19 Մայիսին, թրքական բանակին դիմակայելու համար, Երեւանի պաշտպանութեան ընդհանուր հրամանատար գոր. Մ. Սիլիկեանի հրամանատարութեան տակ Էջմիածնի մէջ կը կազմուի Սարդարապատի Զօրաշնչատը, որուն հրամանատար կը նշանակուի գնդ. Դանիէլ Բէկ Փիրումեան: Սարդարապատի Զօրաշնչատին մէջ կը մտնեն հրաձգային ճրգ գումարտակը (Մահապարտներու Գումարտակ), հրամանատար՝ Պօղոս Բէկ Փիրումեան, հրաձգային ճրգ գումարտակին կէսը՝ 800 կռուող, հրամանատար՝ գնդ. Դուրուխանեան հրաձգային 4րդ գումարտակէն մէկ վաշտ, գնդապետեր՝ Պերեկրիոստովի եւ Սիլիկի, հետեակային զօրամասերը (Պերեկրիոստովի Փարթիզաններ)՝ 1700 կռուող գոր. Արարատեանի ընդհանուր հրամանատարութեան տակ գործող հայկական հրետանային կազմը՝ սպաներ Սաքելիարիի, Կլիչի, Աթանասեանի, Գարաքէշիչեանի հրետանային չորս մարտկոցներով (16-20 թնդանօթ), շուրջ 200 թնդանօթաձիգ եւ յարակից ուժեր Զէյթունի Հեծեալ գունդը՝ 300 կռուող, հրամանատար՝ գնդ. Սալիբէկով, Վանի Ա. եւ Բ. գունդերը՝ 700 կռուող, Յատուկ Հեծեալ գունդը, հրամանատար՝ Ամիրխանեան, Մակուի գունդը Իգլիբեան հետեակային գունդը, Երզնկայի գումարտակը՝ 700 կռուող, հրամանատար՝ Կարօ Ղազապաշեան (Հասան Փաշայեան):

Դէպի հարաւ՝ Արարատեան դաշտ ուղղուող թրքական բանակին դէմ ինքնապաշտպանական առաջին մարտերը կը մղեն Շիրակի գիւղացիները, հիմնականին մէջ՝ Սոգիւթուի (Սառնաղբիւր) եւ շրջակայ Տաշղալէ (Քարաբերդ), Մոլակէօքչա (մարալիկ), Շիրվանշուող (Լեռնակերտ) գիւղերու բնակիչները, ուր տեղակայուած էին նաեւ մեծաթիւ գաղթականներ:

16-22 Մայիսին, Շիրակի դաշտի ինքնապաշտպանութիւնը կազմակերպողներու շարքին կը յիշատակուի նաեւ Պանդուխտ: Ժամանակակիցներէն սօգիւթուցի Յարութ Անդրիկեան կը յուշագրէ, թէ Պանդուխտ եւ արեւմտահայ ալլ հայրուկապետեր «մեր եւ միւս գիւղերում յաճախ էին լինում»։ Շիրակի գիւղացիներուն եւ հայ հայրուկապետերուն միջեւ ստեղծուած գործակցութեան շնորհիւ հնարաւոր կ'ըլլայ Շիրվանշուող-Սոգիւթու-Թաշղալէ-Մոլակէօքչա լեռներուն վրայ ստեղծել շուրջ 14 քմ. երկարող պաշտպանական գիծ մը: Այս կապակցութեամբ ակադ. Հենրիկ Մելիքեան կ'եզրակացնէ. «Պատմական նիւթերի յայտնաբերումը, դրանց նորովի, անկողմնակալ մեկնաբանումն ու գնահատումը մեզ հանգեցրել է այն հետեւութեան, որ 1918 թ. Մայիսի Շիր-

Ստորեւ կը կու տանք հատուածներ Տոքթ. Եղիկ Երեւանի վերջերս լոյս տեսած «Պանդուխտ» հատորէն, որ նուիրուած է Դնչակեան գործիչ եւ Սարդարապատի ճակատամարտի հերոսներէն Պանդուխտի կեանքի ու գործունէութեան



վանշուող-Սոգիւթու-Տապալապաշտպանական գծի ստեղծումը, Սոգիւթուում ու դրա շրջակայ լեռներում Սասունից, Մուշից, Խնուսից, Ալաշկերտից, Բասենից այստեղ հասած Շիրակի, Արագածոտնի գիւղերում ապաստանած մի քանի տասնեակ հազար փախստականների ու տեղական բնակչութեան գոյապայքարի ոգին, գլխաւոր կազմակերպիչը Պանդուխտն էր՝ Միքայէլ Սեֆերեանը» (1):

Յիշեալ շրջաններու ինքնապաշտպանութեան ղեկավարութեան ծրագրերին համաձայն, առաջին հերթին բնակչութիւնը, գաղթականներն ու կռուողներուն մեծ մասը կը բարձրանան շրջակայ լեռները եւ կը տեղաւորուին ապահով վայրեր: Գիւղերուն մէջ, ուրկէ պիտի անցնէին թրքական բանակին ստորաբաժանումները, կը մնան փոքրաթիւ կռուող ուժեր: Ասոնք, անակնկալ հարուածներ տալէ ետք թրքական բանակին, նոյնպէս կը քաշուին լեռնային դիրքերը:

Ինքնապաշտպանութեան դիմելու Շիրակի դաշտի բնակչութեան համարձակութիւնը գոր. Սիլիկեանի կողմէ նկատի կ'առնուի եւ ատիկա կ'օգտագործուի հայկական բանակի ընդհանուր մարտավարութեան մէջ: Ասոր լաւագոյն վկայութիւնը այն է, որ Շիրակի գիւղերէն եկած հայկական բանակի զինուորներուն կը թոյլատրուի մեկնիլ իրենց գիւղերը ւ մասնակցիլ ինքնապաշտպանութեան, որոնք իրենց հետ կը բերեն նաեւ նկատառելի քանակութեամբ զինամթերք: (2): Ինքնապաշտպանական այդ կռիւները իրենց վրայ կը բեւեռեն թրքական բանակին ուշադրութիւնը: Այս ընթացքին, Սարդարապատի զօրաշնչատը տեղաշարժեր կատարելու եւ դիրքաւորուելու համար կը շահի որոշակի ժամանակ:

Շիրակի ընդգիւղացիները նախերգանքն էր Սարդարապատի ճակատամարտին: Հոն գործող ուժերը սակայն բաւարար չէին վերջնականապէս կասեցնելու թրքական բանակը, որուն հիմնական թեւը կը շարունակէ իր առաջընթացը, կը մտնէ Արարատեան դաշտ եւ 21 Մայիսին, առանց լուրջ ընդհարումի, կը գրաւէ Սարդարապատ կայարանը:

Մայիս 22ի առաւօտեան, հայկական բանակը կ'անցնի հակա-

յարձակման: Մահապարտներու Գումարտակը, Պերեկրիոստովի Փարթիզանները, Իգլիբեան Հետեակական գունդը, Զէյթունի Հեծեալ գունդը կու գան Քէօրփալուի (Արշալոյս) եւ Ղուրղուղուլի (Արմաւիր) իրենց դիրքերէն եւ ուժին կը հարուածեն Ղամշուի (Եղէգնուտ) շրջակայքը գտնուող թրքական բանակին: Կողքի եւ թալիսի ուղղութեամբ շարժող Մահապարտներու Գումարտակը կ'ազատագրէ Ուշան եւ Բաշ Խորաբ գիւղերը ու երեկոյան կը մտնէ Գոշ գիւղը (3): Հայկական բանակը կը վերագրաւէ Սարդարապատի կայարանը: Թրքական բանակները անկազմակերպ՝ կը նահանջեն 15-20 քմ.:

Այս յաղթանակը բարոյական մեծ լիցք կը հաղորդէ հայ բանակին եւ ժողովուրդին: Կը փշրուի թրքական բանակներէն անվերջ պարտուելու բարդոյթը: Միանգամայն կ'ալլափոխուի յաջորդական պարտութիւններու ծանր մղձաւանջին տակ կ'քած թիկունքը: Ամէն կողմէ կամաւորներ, մեծ մասը սեփական զէնքերով, կը փութան ռազմաճակատ: Դասալիքները ինքնակամ կը վերադառնան բանակ: Ժողովուրդը հաց, ուտեստեղէն, ջուր, զինամթերք եւ ինչ որ անհրաժեշտ է՝ սրտաբուխ կը հասցնէ կռուողներուն:

Հայկական բանակը նահանջող թրքական բանակը մինչեւ վերջ հալածելու եւ զայն դիրքաւորուելու եւ վերադասաւորուելու առիթէն զրկելու մարտավարութեան չի դիմեր: Ան կանգ կ'առնէ: Ըստ երեւոյթի, Երզնկայէն-Սարդարապատ հայկական բանակին կրած իրարաշարժող պարտութիւնները, երբեմն շատ աւելի նպաստաւոր պայմաններու տակ, բանակի վճռական որոշումներ առնելու համարձակութիւնը: Այս առիթէն օգտուելով թրքական բանակները կ'ամրանան Արաքս կայարանէն 5-6 քմ. հիւսիս-արեւմուտք՝ Չիմնի Ղու (440րդ բլուր) եւ Թուլքի Տափա բարձունքներուն վրայ:

Մայիս 24ին, թուրքերը, պահեստային ընտիր ուժերով համալրուելէ ետք, կը փորձեն վերատիրանալ իրենց կորսնցուցած դիրքերուն եւ կ'անցնին յարձակման: Հայկական հրետանիին դիպուկ հարուածներուն տակ անոնք կանգ կ'առնեն ու կը վերադառնան իրենց ելման դիրքերը:

Մայիս 25ին, հակադարձակում

կը կազմակերպէ հայկական բանակը, այս անգամ թուրքերն են, որ գործի կը դնեն գերմանական կատարելագործուած գնդացիները եւ կը խափանեն յարձակումը, (այս հակադարձակումը կը վերագրուի հրաձգային ճրգ գունդի քաջարի սպաներէն Վարդան Զաղինեանին նախաձեռնութեան, որոն ընթացքին հայկական բանակը կու տայ 56 զոհ, ներառեալ՝ Վ. Զաղինեանը): Նոյն երեկոյան գնդ. Դանիէլ Բէկ Փիրումեանի գլխաւորութեամբ, Սարդարապատի Զօրաշնչատի հրամանատարութիւնը կը մշակէ եւ գործադրութեան կը դնէ թրքական բանակը շրջանցելու եւ թիկունքէն հարուածելու մարտավարութեան յատկազօծ մը:

Պատմաբան Երուանդ Սարգիսեան այս շրջանցումին մասին կը գրէ, «Ստեղծուեց հարուածային զօրախումբ (գնդ, Կ, Հասանփաշայեանի (Ղազաբփաշեան) հրամանատարութեամբ, զօրախմբի կազմում էին Երզնկայի հետեակային գունդը, Մակուի առանձին գումարտակը, երկու էսկադրոն, Խնուսի գնդի մէկ վաշտ եւ 4 հրանօթ), որոնք Պանդուխտի (Միքայէլ Սեֆերեան) գլխաւորած մշցիների ջոկատի հետ շրջանցելով թուրքերին, Մայիսի 27ին հարուածեցին նրանց թիկունքից, միաժամանակ հայի, հիմն, ուժերը հարուածեցին ճակատից» (4):

Խզնաուզի ջոկատի կազմին եւ գործունէութեան մասին իւրաքանչեւ տեսակէտ ունի Սարդարապատի ճակատամարտին մասնակից, թնդանօթաձիգ սպայ, գնդ, Արթիւր Ալվազեան: Ան Սարդարապատի ճակատամարտը կը բաժնէ երկու ինքնուրոյն մասերու՝ Սարդարապատ եւ Խզնաուզ, ապա կը խօսի «Սարդարապատի եւ Խզնաուզի ռազմաճակատներու յաղթանակներուն» մասին, (գիրքը կը կոչուի «Հայկական յաղթանակները Խզնաուզի եւ Սարդարապատի Մէջ»): Ա, Ալվազեանի համաձայն, Խզնաուզի ջոկատը կը կազմէին երկու թնդանօթ: Երզնկայի գումարտակը յաջողութեամբ կը կատարէ իր շրջանցումը եւ Մայիս 23ի կէսօրէին շեշտակի հարուածի տակ կ'առնէ թրքական բանակին ծալագոյն ձախ թեւը, կռուին իրենց շատ դիպուկ հարուածներով կը միանան Սաքիլիարիի թնդանօթները: Թրքական բանակին ձախ թեւը անսպասելի եւ շեշտակի հարուածներէն կ'րերեայ ու կը սկսի նահանջել: Այս տեղ կ'աւարտի Խզնաուզի յաղթանակը»:

ՀՀ պաշտպանութեան նախարարութեան կողմէ Սարդարապատի ճակատամարտին ռազմական վերլուծութեան մէջ՝ շրջանցման այս գործողութեան մասին կ'ըսուի. «Ժամը 14ին տեղեկութիւն ստացուեց, որ Խզնաուզի ճակատը (ջոկատը Ե.ձ.) (Երզնկայի գունդ) յաջողութեամբ շրջանցում է թուրքերի ձախ թեւը: Այդ նոյն ժամանակ նրանից աջ յարձակուող Կոչի ջոկատը (մակուի գումարտակ), չկարողանալով յաղթահարել, թշնամու դիմադրութիւնը ներքին Կարակուրտ գիւղի մօտ՝ ստիպուած կանգ առաւ, նրան որպէս օգնութիւն՝ Երզնկայի գնդի հրամանատար, կապիտան Կ, Հասան-Փաշայանի կողմից ուղարկուեց երկու վաշտ»։ Սա բնականաբար կը դժուարացնէ Երզնկայի գունդին արագ տեղ հասնելը



### ՆՈՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Ծ.Խ. Իր շահեկանութեան համար կը հրատարակենք Ալեոսիս Ահարոնեանի 20 Հոկտեմբեր 1918-ին գրի առնուած պատկերացումը, թէ ինչպիսի՞ն պէտք է ըլլայ Հայաստանի նորանկախ Հանրապետութիւնը: Ընթերցողը պիտի նշմարէ, որ մեծաւ մասամբ այն կը մնայ այժմեական:

Հայ ազգի մօտաւոր ու հեռաւոր բախտի մասին խօսքս կ'ուզէք: Անակնկալներով հարուստ մեր օրերում՝ դժուար է վճռական խօսք արտասանել ժողովուրդներու ապագային եւ մանաւանդ Հայ ազգի ճակատագրի մասին. սակայն ինձ թւում է, որ անգամ գաղափարներու ու հակամարտ շահերի այս համատարած բաղխումներէջ բարձր կան գերիշխող պատմական օրէնքներ, երկաթէ տրամաբանութիւն, որ կարող է կռուան ծառայել քանի մը ընդհանուր տեսութիւններու համար ձեզ հետաքրքրող հարցի տեսակէտից:

Սովորաբար ընդունուած էր մինչեւ այժմ՝ 19րդ դարը նկատել ազգայնական գաղափարներու ու ձգտումներու յախուռն շրջան, սակայն չնայելով անցեալ դարի վերջից ու մեր դարի սկզբից ծայր տուած ընկերական վարդապետութիւններու անհազին ծաւալումին, այսօր վստահաբար կարելի է որ յատկապէս մեր դարն է, այդ 20րդ դարը, երբ ազգայնական շարժումները հասնելու են իրենց զարգացման ծայրագոյն աստիճանին, հրամայողաբար լուծուան պահանջելով աշխարհի բախտի վարիչներէջ: Ընկերական վարդապետութեան ամենամեծ սխալը եղաւ իր ծաւալական չարաչար խանդի մէջ լքումի մատնել ազգային հարցը, որը ինչ եւ լինի՝ աշխարհի ամենայամառ, ամենաբարձրակոչ եւ աղաղակող հարցերից մէկն է եւ պիտի չքաշուի հրապարակից՝ մինչեւ արմատապէս լուծուի: Կրկնում եմ, 20րդ դարին է վիճակուած լուծել այդ ցաւոտ հարցը՝ որ գերազանցապէս մարդկութեան հարց է:

Ասացի քիչ վերը, «աշխարհի բախտի վարիչներ», այժմ այդ «վարիչները» ոչ այլ որ պիտի լինին բայց եթէ ազգերն իրենք, եւ անա այս տեղ է հրաշալի հանգոյցն ու լուծումը ազգային հարցի: Եւ տարօրինակ հակադրութեամբ, մի աննման պարատոքսով, այս ար-

դիւնքը պարտական ենք մասամբ նաեւ միջազգայնութեան ընկերական վարդապետութեան քարոզած միջազգայնութեան, որ միանգամայն իր չսպասած, չհետապնդած արդիւնքի տարաւ համայն մարդկութիւնը: Առաջիկայ կոնգրէն լինելու է ազգերի Արիսպագ որ պիտի կարողնայ գերագոյն հատուցումը տալ տառապող ցեղերին: Հայ ցեղը որ Ազգերի Արսպագին պիտի ներկայանայ վաղը՝ իր արդարագոյն դատի արիւնագանգ շքեղութեամբ, անկսկած այսօր իր փրկութեան նախօրեակի առջեւ է կազնած, եւ ծագող արեւի ցոլքերի առջեւ տակաւին աչքերը խտողում, բայց զարթնում է յուսալի ու հպարտ: Հաւատարիմ խորապէս, որ մեր ժողովուրդի վերջնական փրկութեան ժամն է հնչել, բայց եւ դրա համար մեր ցեղական կուռ իմաստութեան բարձրագոյն աստիճանը պիտի կիրարկել, դարերի գործը կերտելու համար: Մեր ընդհանուր սկզբունքը պիտի լինի այս հայ նուիրական հողի եւ թէ մանաւանդ Հայ ցեղի ի մի համախմբումը: Հայ «պոչաւոր» կոչումը (Ռուս-ա-հայ, Թիւրք-ա-հայ, Պարսկ-ա-հայ, Ամերիկա-հայ) պէտք է կտակել մեր անցեալ, մեր աղէտաւոր պատմութեան եւ ճակատին կնքել հպարտ, անաղարտ, շքեղ անունը՝ ՀԱՅ եւ ՀԱՅԱՍՏԱՆ, ամենէն աւելի անարգուած, տրորուած, արիւնոտուած հայրենիքը, եւ այս պատճառով Հայրենիքներից ամենանուիրականը:

Այս ստեղծագործական գաղափարը հետապնդելու ենք ոչ միայն մեր իրական փրկութեան արդարութեան յաղթանակի համար, այլ նաեւ նրա համար որպէս զի յաւիտենապս կարողանանք հաշտ ու խաղաղ ապրիլ մեր շուրջը եղող մեր բոլոր հարեւանների հետ քաղաքակրթութեան իրաւունքի, արդարութեան մեծ ու միահամուռ աշխատանքի համար ամենքին հետ: Անհնարին է մեր փրկութիւնը, առանց Հայ Հայրենիքի - Կովկաս-

### ՍԱՐԴԱՐԱՊՈՒՍ-100

### ՍԱՐԴԱՐԱՊՈՒՍԸ՝ ՀԱՅՈՑ ԶԱՆԳԱՅԱՐ...

Հնչու՛մ եմ զանգերն ու նրանց դողանջը գնու՛մ, հասնում է դէպի խորքը դարերի, մարդկանց գտնում Աւարայրի դաշտում, նահատակուած Վարդանանց հողիներում:

Հնչու՛մ են զանգերն, ու հաղթութեան Եռագոյնն է կրկին ծածանում Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերում:

Հնչու՛մ են զանգերն ու հրաշքով յարութիւն են առնում հերոսամարտի արծիւները՝ Դանիէլ-Բեկ փրկումեանն ու Մովսէս Միլիկեանը, Ալեքսանդր Վեքիլեանն ու Սերգօ Աթանեսեանը, Վարդան Ջաղինեանն ու Խորէն Իգիթեանը, Պանդուխտն ու հարիւրաւոր շարքային մարտիկներ, կամաւորներ, ֆրոնտիներ:

Հնչու՛մ են զանգերն ու զանգերի խորխոս հնչիւնների ներքոյ տարածում է Հայոց կաթողիկոսի սրբազան կուռի ոգեւորիչ կոչը. «Հայե՛ր, շտապէ՛ք հայրենիքն ազատելու: Հասել է ըրպէն, երբ իւրաքանչիւր հայ, մոռանալով իր անձնականը, յանուն մեծ գործի, հայրենիքի փրկութեան եւ իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պիտի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարուածելու համար...»

Հայե՛ր, ժամանակը չի՛ դանդաղելու... Հայուհիներ՛, չի՛չեցէ՛ք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին դէպի մեծ գործը՝ անմահ Վարդանի կոխիւնների ժամանակ, հետեւեցէ՛ք նրանց օրինակին, եթէ չէք ուզում, որ ձեր

եան ու թուրքիոյ Հայաստանի - լիակատար ազատագրումին: Անհնարին է այդ ազատագրումը, առանց հայ ցեղի ցրուած բեկորների - բոլոր բեկորների - ի մի համախմբումին: Անհնարին է խաղաղութիւնն ու վերջնական հաշտութիւնը մեր հարեւանների, մեր այսօրուայ իշխող ցեղերի հետ, առանց հայ ցեղի լիակատար համախմբումին, առանց Հայ Հայրենիքի լիակատար ազատագրումին: Հին Հայաստանը դաժանօրէն

պատիւը ոտնատակ լինի, խրախուսեցէ՛ք այրերին, յանուն բազմաչարչար հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան, յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան: Ոտքի՛ կանգնեցէք: Դէպի՛գործ, դէպի՛ սրբազան պատերազմ...»:

Հնչու՛մ են զանգերն, ու մեզ ոտքի է կանչում մի ո՛ղջ ժողովուրդ: Ժողովուրդ, որն իր դարաւոր պատմական փորձով համոզուել էր, որ առանց թշնամուն հարուածելու ու յաղթանակի նկատմամբ խոր հաւատի՝ չէր կարող գոյատեւել, ձեւաւորուել որպէս ժողովուրդ, որպէս ազգ:


Հնչում են զանգերն ու հայոց պատմութեան հերոսամարտում՝ 451թ. Մայիսի կողքին աւելանում է եւս մի ճակատագրական Մայիս: 1918թ. Մայիսի 26-ին Սարդարապատի հերոսամարտում թուրքական կանոնաւոր բանակը գլխովին ջախջախուեց, Մայիսի 24-26-ը՝ եռօրեայ արիւնահեղ մարտերում զաւթիչները ծանր պարտութիւն են կրում Բաշ-Ապարանում, Մայիսի 24-28-ը թշնամին կասեցուեց Ղարաքիլիսայի մօտ մղուող պայքարում:

Հնչու՛մ են զանգերն, ու հայոց հինաւուրց հողում կրկին վերականգնում է Հայոց պետականութիւնը, կրկին ծիածանում է ԱԻԱՐԱՅՐԻՅ ՍԱՐԴԱՐԱՊՈՒՍ, իսկ տարիներ անց նաեւ ԱՐՅԱՆ, հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարը խորհրդանշող ՀԱՅՈՑ ԵՌԱԳՈՒՅՆԸ...

Այսօր էլ հնչում են զանգերը. ՍԱՐՈ ԳԻՒՄՐԵՅԻ

խորթ մայր եղաւ մեզ, իսկ նոր Ռուսաստանը՝ աւելի վաթսար: Հին թուրքիան մեր արիւնը քամեց, նոր թուրքիան աւելի վատթար, միայն նոր Հայաստանն է, ազատագրուած եւ վերածնուած ու համախմբուած հայ ցեղն է որ պիտի բարձրանայ այսօր մեր հայրենի աւերակների միջից, որպէս արդարութեան, իրաւունքի, քաղաքակրթութեան գերագոյն յաղթանակ:

ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ  
Կ. Պոլիս, 20 Հոկտ. 1918



## ՆԻԿՈՒ ԱՂԱԲԱԲԵՅԱՆ

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ

ԲԱՑՈՒՄ - ՈՒՐԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 1, 2018 • ԵՐԵԿՈՅԵԱՆ 7:30 - 10:00  
ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 2 • Կ.Ե. 5:00 - 9:00 / ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 3 • Կ.Ե. 3:00 - 7:30  
Հ.Բ.Ը.Ս. ՎԱՉԵ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿԵՂՐՈՆ  
ՊՈՅԱԾԵԱՆ ՍՐԱՀ - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104

## NIKOL AGHABABYAN

### EXCLUSIVE EXHIBIT OF PAINTINGS

OPENING RECEPTION - JUNE 1, 2018 • 7:30 PM - 10:00 PM  
SATURDAY, JUNE 2 • 5:00 PM - 9:00 PM / SUNDAY, JUNE 3 • 3:00 PM - 7:30 PM  
A.G.B.U. VATCHE & TAMAR MANOUKIAN CENTER  
BOYAJIAN HALL - 2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104  
FOR MORE INFORMATION, PLEASE CALL 818.445.0094



# «Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ Եկեղեցւոյ Դերակատարութիւնը Հայոց Պետականութեան Կայացման Գործին Մէջ» Խորագիրով Գիտաժողով Էջմիածինի Մէջ



22 Մայիսին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանին մէջ, ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանի նախաձեռնութեամբ՝ մեկնարկեց «Հայաստանի Հանրապետութիւնը եւ հայ եկեղեցւոյ դերակատարութիւնը Հայոց պետականութեան կայացման գործին մէջ (1918-2018թթ.)» խորագիրով գիտաժողովը՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան եւ Մայրսեան հերոսամարտերու 100-ամեակին: Այս մասին կը հաղորդէ ՀՀ սփիւռքի նախարարութեան մամուլի վարչութիւնը:

Գիտաժողովի բացման Օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ան իր խօսքին մէջ կարեւոր համարեց գիտաժողովի իրականացումը, որուն ընթացքին մէջ անգամ եւս անդրադարձ պիտի կատարուի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ նուիրական առաքելութեան, ազգանուէր գործունէութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ Մայրսեան հերոսամարտերը ապացոյցն էին հայ ժողովուրդի սիրոյ ու միասնականութեան, եւ մեր Սուրբ Եկեղեցին ինչպէս 1918 թուականին, այնպէս ալ Արցախեան հերոսամարտի ողջ ընթացքին օրհնած է ժողովուրդի արդար պայքարը: Վեհափառն իր խօսքին մէջ ընդգծեց, որ Հայաստանի Առաջին Հանրապետութեան եւ Մայրսեան հերոսամարտերու 100-ամեակը աշխարհասփիւռ հայ ժողովուրդին ուղղուած ազդակ են՝ նպաստելու մեր պետութեան զարգացման ու առաջընթացին:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան: Ան ընդգծեց, որ Սփիւռքի նախարարի պաշտօնին առաջին անգամ կը մասնակցի նման կարեւոր ձեռնարկի, որ աւելի կը սերտացնէ նախարարութեան եւ Մայր Աթոռի յարաբերութիւնները:

Նախարարը կարեւոր համարեց համահայկական առաջնահերթութիւններ, մասնաւորապէս՝ հայապահպանութիւնն ու հայրենադարձութիւնը: Անդրադառնալով համաշխարհայինացման մարտահրաւէրներուն եւ Սփիւռքի մէջ ուժացման վտանգին՝ Մխիթար Հայրապետեան ընդգծեց, որ այս երկու առաջնահերթութիւններու կենսագործման համար սահմանուած է քաղաքական յատուկ ուղենիշ:

Մխիթար Հայրապետեան նշեց, որ այսօր Սփիւռքի մէջ առկայ է Հայաստանի կողքին ըլլալու, այն շէնացնելու եւ զարգացնելու աննախադէպ ալիք: Ան անդրադարձաւ Հայոց պետականութեան կայացման գործին մէջ հայ եկեղեցւոյ դերակատարութիւնը՝ նշելով, որ եկեղեցին պետականութեան բացակայութեան պայմաններուն մէջ անգամ ապաւէն եղած է իր ժողովուրդին: Ան շեշտեց, որ իւրաքանչիւրի գործունէութեան հիմքին պէտք է ըլլայ հզօր Հայաստանի, ապահով Արցախի եւ կազմակերպուած Սփիւռքի տեսլականը: «Վստահ եմ, որ համատեղ ուժերով կարող ենք հասնել մեր համազգային նպատակների կենսագործմանը», - եզրափակեց իր խօսքը Մխիթար Հայրապետեան: Բացման խօսքով հանդէս եկաւ նաեւ Մայր Աթոռի արտաքին յարաբերութիւններու եւ արարողակարգի բաժնի տնօրէն Տ. Նաթան արք. Յովհաննիսեան:

Գիտաժողովն աշխատանքները շարունակեց երկու նիստերով: Գիտաժողովի ղեկուցողներն են ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկի տնօրէն Վարդան Դերիկեան («Մայր Աթոռի եւ Սփիւռքի թեմերու յարաբերութիւնները Հայաստանի առաջին

Հանրապետութեան տարիներուն»), Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումեան («Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները. պատմական ակնարկ»), Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգիսեան («Հայ եկեղեցւոյ դերակատարութիւնը Հայոց պետականութեան կայունացման եւ զօրացման գործին մէջ. պատմական ակնարկ»), ԵՊՀ պատմութեան բաժանմունքի տնօրէն Էդիկ Մինասեան («Հայ եկեղեցին Հայաստանի երրորդ Հանրապետութեան անկախութեան եւ պետականաշինութեան համար մղուող պայքարին մէջ (1991-2001 թթ.)»), մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի թանգարաններու եւ արխիւի տնօրէն Տ. Ասողիկ քհն. Կարապետեան («Գէորգ է Հայոց Հայրապետ»), ԵՊՀ աստուածաբանութեան բաժանմունքի Հայ եկեղեցւոյ պատմութեան եւ եկեղեցաբանութեան ամպիոնի փրոֆէսոր Արծրունի Սահակեան («Մայր Աթոռի հայահաւաք ու պետականակերտ միտումները 15-20-րդ դարերուն»), Հայաստանի ազգային արխիւի շարժանկարչական փաստաթուղթերու մասնաճիւղի վարիչ Աւագ Յարութիւնեան («Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի հասարակական գործունէութիւնը 1918-1920 թթ.»), Ազգային արխիւի գիտահետազոտական բաժնի վարիչ Գոհար Աւագեան («Մայր Աթոռի կալուածական խնդիրները Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներուն»), ԵՊՀ իրաւագիտութեան բաժանմունքի պետութեան եւ իրաւունքի տեսութեան ու պատմութեան ամպիոնի վարիչ, Գէորգեան հոգեւոր ճեմարանի դասախօս Արթուր Վաղարշեան («Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադրման նախադրեալները»), Մ. Հերացիի անուան ԵՊԲՀ Հասարակագիտական առարկաներու ամպիոնի վարիչ Վահան Մելիքեան («Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի 1917 թ. եկեղեցական համագումարը»), Գէորգեան հոգեւոր ճեմարանի եւ Խ. Աբովեանի

անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախօս Աւետիս Յարութիւնեանը («Հայաստանի առաջին Հանրապետութեան ստեղծման հարցի շուրջ»), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Տ. Վարուժան արք. Հերկելեան («Հայ եկեղեցին գործակից հայկական պետութեան»), ԵՊՀ պատմութեան բաժանմունքի Հայոց պատմութեան ամպիոնի փրոֆէսոր Աշոտ Հայրունին («Հայաստանի Հանրապետութեան Պետիւնի պատուիրակութեան գործունէութիւնը 1918 թուականին»), Գիւմրիի Հայ Կաթողիկէ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հ. Մաշտոց վրդ. Զահեթեանը («Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ներդրումը եւ անոր մշակած յարաբերութիւնը Հայոց նորաստեղծ պետականութեան յարատեւման եւ հզօրացման գործընթացին մէջ»), Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Պատուելի Արամ Բաբաջանեանը («Հայ Աւետարանական եկեղեցւոյ գործունէութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներուն»), ՌԳ եւ ՀՀ պատմական գիտութիւններու դոկտոր, Մոսկուայի պետական համալսարանի Երեւանի մասնաճիւղի փրոֆէսոր Ստեփան Ստեփանեանը («Նոր Նախիջևեանի եւ Բեսարաբիայի թեմը 1917-1920 թթ.»), ԵՊՀ աստուածաբանութեան բաժանմունքի Հայ եկեղեցւոյ պատմութեան եւ եկեղեցաբանութեան ամպիոնի դասախօս Լիլիթ Պողոսեանը («Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը»), Մ. Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկի առաջատար գիտաշխատող Սուսաննա Յովհաննիսեանը («Յովհաննէս Թումանեանի գործունէութիւնը Հայաստանի առաջին Հանրապետութեան ստեղծման օրերուն»), պատմական գիտութիւններու թեկնածու, սփիւռքագէտ Հայկ Ենգիբարեանը («Հայ Առաքելական Եկեղեցին եւ Մեծ հայրենադարձութեան պետական ծրագիրը»):

**Պտոյտ Դէպի**  
**Santa Barbara, Solvang, Chumash Casino**  
 Կազմակերպութեամբ՝  
**Կիլիկեան Բարեգործական Միութեան**  
 Կիրակի, 10 Յունիս, 2018-ին  
 Մասնակցութեան սակ՝ 40 տոլար,  
 Նեոարեալ նախաճաշ եւ Snack:  
**Մեկնում՝ առաւօտեան ժամը 7:30-ին**  
**ՀՄՄ-ի ակումբէն**  
 1060 N. Allen Pasadena, CA 91107  
 Ժամը 8:00-ին Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ դիմացէն  
 500 S. Central Ave. Glendale, CA.



### Հայաստանը Պէտք է Դատապարտի

Շարունակուած էջ 2-էն

շուրջ ընթացող բանակցութիւնները, որով իսրայէլական գազը պէտք է մատակարարուի Թուրքիա:

Իսկ այդ ընթացքում «Հրէական Տուն» կուսակցութեան ֆրակցիան կենսական ներկայացրել է այնքան թեթեւաբանութեան ճանաչման բանաձեւը: Դա նշանակում է, որ հրեաները հասկանում են, որ էրտողանը «դերասանութիւն» է անում, սակայն զգուշացնում են, որ չափերը չանցնին: Փաստօրէն, հերթական անգամ Յեղասպանութեան հարցը Թուրքիայի նկատմամբ որպէս մահալ է օգտագործուում:

Ժամանակն է, որ Հայաստանի արտգործ նախարարութիւնը յայտարարութեամբ հանդէս գալու եւ զգուշացնի, որ բաւական է իսրայէլը հայերի ողբերգութիւնը որպէս գործիք օգտագործի իր նպատակներին հասնելու համար՝ կամ թող ճանաչի, կամ այդ հարցը մոռանայ: Քաղաքականութեան մէջ ցիւնիզմը եւ անբարոյականութիւնը սահմաններ պէտք է ունենան:

Եւ չպէտք է վախենալ նման յայտարարութիւն անելուց, իսրայէլում բաւականին շատ բարոյական ու ազնիւ մարդիկ կան, որոնք կ'ողջունեն նման կարծիքը եւ դրանից յետոյ յարգանքով կ'ըլցունեն Հայաստանի հանդէպ:

### Սարդարապատի ճակատամարտի 100-Ամեակ

Շարունակուած էջ 8-էն

Արաքս կայարանը, իսկ երեկոյեան նաեւ Մաստարա կիսակայարանը (այժմ՝ Դալարիկ), որտեղ էլ կանգ առաւ: Իսկ Պանդուխտի հեծեալ ջոկատը, Ներքին կաշկուտից հարաւ յարձակման անցնելով, Կոշի ջոկատի եւ Խզնաուզի՝ օգնութեան հասած վաշտերի հետ միասին յաղթահարեց թուրքական ուժերի դիմադրութիւնը, ապա խորը ճեղքում իրականացրեց դէպի հիւսիսարեւմուտք: Մայիսի 27-28-ին, ճնշելով հակառակորդի մանր ջոկատները, Պանդուխտի ջոկատը սրընթաց ռազմարշաւով՝ Թալիսի, Գեօզլուի եւ Ղրմըզլուի վրայով հասաւ մինչեւ Սոգիւթլու, որտեղ նրան միացաւ տեղի 1000-հոգանոց ջոկատը: Հակառակորդից զբաւեց մէկ հրանօթ, մեծ թուով գերիներ վերցուեցին:

Այսպիսով Մայիսի 27-ի վճռական մարտերի ընթացքում թուրքերը կատարեալ պարտութիւն կրեցին՝ խուճապահար նահանջելով դէպի Ղարաբուրուն կայարան-Ղարաբուրուն լեռ գիծը: Ճակատամարտը շահած, սակայն հանգստի կարիք ունեցող Սարդարապատի ջոկատին հրամայուեց կանգ առնել եւ ամրանալ Մաստարա կիսակայարանի բարձունքներում: Այդ օրուայ ընթացքում Մարգարայի մօտ հետ մղուեց նաեւ Արաքսը գետանցել փորձող քրդական 100-հոգանոց մի հրոսակախումբ:

Մայիսի 27-28-ի գիշերը հայկական ուժերն առաջանալով հասան Ղարաբուրուն կայարան-Կարմրասար լեռ գիծին: Իսկ մայիսի 28-ի ցերեկը Ղարաբուրուն-Աշնակ բնագծում տեղի ունեցած կարճատեւ մարտից յետոյ, դարձեալ չզիմանալով հայկական կողմի գրոհներին, թուրքերը սկսեցին նահանջել դէպի Արագած կայարան - Ղրմըզլու - վերին Աղջաղալա, բայց այդ բնագծում եւս չզիմանալով՝ շուտով հետ մղուեցին դէպի աւելի հիւսիս: Այդ օրուայ մարտերի արդիւնքում հայկական կողմը զբաւեց Ղարաբուրուն եւ Արագած կայարանները, ինչպէս նաեւ Ներքին ու վերին Թալիսիները եւ Մաստարան, իսկ հայկական հետախուզական ջոկատները հասան մինչեւ Անի կայարան՝ պարզելով, որ մինչեւ Անի եւ Աղին կայարաններ թուրքական ուժեր չկան, բոլորը նահանջել են: Սակայն յաջորդ օրը՝ Մայիսի 29-ին, զգալի համալրում ստանալով, թուրքերը հակադարձակման անցան Արագած կայարանի վրայ: Հայկական առաջապահ ուժերը, թուրքական հրետանու ճնշման, ինչպէս նաեւ թուրքական հեծեալների կողմից ձախ թելի շրջանցման վտանգի տակ ստիպուած նահանջեցին եւ ամրացան Ղարաբուրուն կայարանում: Մինչդեռ ռազմաճակատի աջ թեւում հայկական ուժերն ամբողջ օրը ծանր մարտեր մղեցին Շիրուանջուղ գիւղի մօտ: Հենց այդ օրը՝ Մայիսի 29-ին, երեւանեան զորախմբի հրամանատար գեներալ Մովսէս Սիլիկեանը երկրորդ անգամ կոշով դիմեց զորքին ու ժողովրդին՝ դէպի Ալեքսանդրապոլ յաղթական մարտերը շարունակելու վերաբերեալ:

Սակայն Բաթումում հայկա-

կան պատուիրակութեան կողմից թուրքական եւօրեայ ժամկէտով (Մայիսի 26-29) վերջնագրի ընդունման կապակցութեամբ նոյն օրը զինադադար հաստատուեց: Գեներալ Թովմաս Նազարբեկեանի հրամանով հայկական բոլոր զորքերի յարձակումները դադարեցին: Դա ազդարարեց Սարդարապատի ճակատամարտի աւարտը: Զինադադարի եւ յարձակման դադարեցման մասին լուրը խիստ դժգոհութեամբ ընդունուեց ինչպէս Սարդարապատի ճակատի զինուորների, այնպէս էլ հրամանատարական կազմի շրջանում: Հայկական հրետանու հրամանատար գնդապետ Քրիստափոր Արարատեանի հաղորդմամբ, թէեւ զինադադարի հաստատման պահին երեւանեան զօրախմբի դրութիւնը մեծապէս նպաստաւոր էր, սակայն Ղարաքիլիսայի ճակատում հայերի կրած լիակատար անյաջողութիւնը ստիպեց դադարեցնել յարձակումը, քանի որ Երեւանը բաց կը մնար հիւսիսարեւելքից հակառակորդի ներխուժման առջեւ: Որոշ տեսակէտների համաձայն՝ Սարդարապատի ճակատում յարձակման դադարեցումը պայմանաւորուած էր նաեւ հայկական կողմի զինապահեստների զրեթէ դատարկ լինելու եւ միւս կողմից, թուրքական ուժերի՝ թարմ համալրումներ ստանալուց յետոյ հակադարձակման անցնելու վտանգով:

Բաթումում զինադադարի հաստատումից յետոյ Սարդարապատի ճակատում որոշ հատուածներում մարտական գործողութիւնները շարունակուեցին, սակայն էական փոփոխութիւններ տեղի չունեցան: Բաթումի հաշտութեան պայմանագրի կնքումից յետոյ՝ յունիսի 14-ին, հայկական բոլոր ուժերը զբաղեցրած դիրքերից հետ քաշուեցին պայմանագրով նախատեսուած սահմանագիծ:

Սարդարապատի ճակատամարտում թուրքական կողմի կորուստները կազմեցին շուրջ 3 500 սպանուած եւ վիրաւոր, մինչդեռ հայերի կորուստներն անհամեմատ աւելի պակաս էին, թէեւ յստակ տուեալներ չկան: [43]

Սարդարապատի 9-օրեայ ճակատամարտն աւարտուեց հայերի լիակատար յաղթանակով, որի արդիւնքում հակառակորդը ջախջախուեց ու հետ շարտուեց 50-65 կմ, վերացուեց Երեւանին սպառնացող անմիջական վտանգը: Յաղթանակը վճռական դեր խաղաց Արեւելեան Հայաստանի դէմ թուրքական զորքերի արշաւանքի մասնակի ձախողման եւ, մասնաւորապէս միւս ճակատներում՝ Բաշ-Ապարանում յաղթական հակահարուածի եւ Ղարաքիլիսայում հերոսական պաշտպանութեան ապահովման գործում: Սարդարապատի հերոսամարտը տեղի բնակչութեանն ու արեւմտահայ զաղթականներին փրկեց անխուսափելի ջարդերից: Կազմակերպչական մեծ ջանքերի գնով տարած յաղթանակը նպաստեց նաեւ Երեւանում գործող քաղաքական ու հասարակական կազմակերպութիւնների, ինչպէս նաեւ տեղի ղեկավար մարմիններին ու առաջատար գործիչների դերի ամրապնդմանը փաստացի հիմք դրուեց նորահռչակ Հայաստանի Հանրապետութեան կայացմանը:

**HARRY THE HANDYMAN SERVICES**  
**Air Conditioning Repair**  
**Plumbing & Roofing**  
**Water & Gas Pipes • Fencing & Painting**  
**Iron Work Repair • Electrical Job**  
 Email: haroutig007@gmail.com  
**Dependable • Reliable • Fast Work**  
**CALL HARRY**  
**818•219•3314**

**Ինքնաշարժ Վարելու Դասընթացքներ**  
**Բացառիկ հնուտ և փորձառու**  
**վարորդ-հրահանգիչ**  
**Գործ Օհանեան-ի կողմից**  
 George Ohanian Driving & Traffic Instructor  
 Tell:( 818) 434-6407  
 Email:geohanian@gmail.com  
 Website:georgedriving.com

**AUTO BODY MAN**  
 Ինքնաշարժի նորոգութեան ընկերութիւն մը կարիքը ունի տասը տարուան փորձառութիւն ունեցող Body Man-ի մը West Los Angelesի մէջ:  
 Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել Սթիվին (949) 394-7757 թիւին:

**OFFICE SPACE FOR RENT**  
**IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Պրիմերայում Ամենաշատ Կոլ Խփեց Մեսի

Ֆուտպոլի Սպանիայի աւարտուած առաջնութեան լաւագոյն ումբարկու դարձաւ Լիոնել Մեսին: «Բարսելոնայի» արժենթինացի յարձակուողը Պրիմերայի «Ոսկէ խաղակօշիկ» մրցանակին արժանացաւ 34 կոլով: 30-ամեայ Մեսին Սպանիայի առաջնութեան լաւագոյն ումբարկու դարձաւ երկրորդ տարին անընդմէջ: Նախորդ մրցաշրջանում նա խփել էր 37 կոլ: Ռմբարկուների ցուցակում երկրորդ տեղը գրաւեց Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն, որը խփեց 26 կոլ: «Բարսելոնայի» ուրուգուայցի յարձակուող Լուիս Սուաւերը 25 կոլով գրաւեց երրորդ տեղը, իսկ չորրորդ տեղում յայտնուեց Վիգոյի «Սելտայի» ներկայացուցիչ Յագո Ասպասը՝ 22 կոլ:



## Գերմանիայի Գաւաթ. «Բաւարիան» Տիտղոսը Տանուլ Տուեց «Այնտրախտին»



Ֆրանկֆորտի «Այնտրախտը» 5-րդ անգամ նուաճեց ֆուտպոլի Գերմանիայի գաւաթը: Պեւլինի «Օլիմպիական» ստադիոնում տեղի ունեցած եզրափակչում «Այնտրախտը» մրցեց Գերմանիայի ախոյեան Միւնխենի «Բաւարիայի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով Յաղթած թիմ կազմում դուբլի հեղինակ դարձաւ խորվաթ յարձակուող Անտէ Ռեբիչը:

## Սահակ Յովհաննիսեանը եւ Էդմոնդ Նազարեանը՝ Եւրոպայի Պատանեկան Ախոյեաններ

Հայաստանը ներկայացնող Սահակ Յովհաննիսեանը նուաճել է Մակեդոնիայում անցկացուող յունահունգարական ըմբշամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան ախոյեանի տիտղոսը: 60 կգ քաշային կարգի եզրափակչում Յովհաննիսեանը 5:3 հաշուով յաղթել է վրացի Գէորգի Չիխիվաձէին եւ նուաճել ոսկէ մետալ:



48 կգ քաշային Գառնիկ Յարութիւնեանն արժանացել է պրոնզէ մետալի: Մետալային գօտեմարտում Յարութիւնեանը 8:0 հաշուով յաղթել է հունգարացի Գաբոր Կովաչին:

## Մոսկուայի «Արարատի» Որոշ Ֆուտպոլիստներ Չեն Տեղափոխուի Հայաստան

Մոսկուայի «Արարատի» գլխաւոր տնօրէն Պօղոս Գալստեանը հաստատել է, որ ռուսական ակումբը յաջորդ մրցաշրջանում հանդէս է գալու ֆուտպոլի Հայաստանի առաջնութիւնում: «Այո, մենք կը զարգացնենք նախագիծը Երեւանում գտնուող «Աւան Ակադեմիայի» բազայում: Որոշումն ընդունուած է, այն 100 տոկոսանոց է: «Արարատը» հանդէս չի գա Ռուսաստանի առաջին դիւիզիոնում (Ֆուտպոլի ազգային լիգա): Ակումբը կը կոչուի կամ «Արարատ-Մոսկուա», կամ «Արարատ-Հայաստան». դա կ'որոշուի աւելի ուշ: Կը ցանկանայինք ակումբի որոշ խաղացողների տանել մեզ հետ, սակայն նրանք ցանկանում են կարիերան շարունակել Ռուսաստանում: Նրանք կը տեղափոխուեն տարբեր ակումբներ: Կարծում եմ՝ նրանք

## Աւարտուեց Հայաստանի 26-րդ Առաջնութիւնը «Շիրակը» Պոյկոտեց Վերջին Տուրը



Աւարտուեց ֆուտպոլի Հայաստանի Բարձրագոյն խմբի 26-րդ առաջնութիւնը:

Պայմանաւորուած խաղի հետ կապ ունենալու մէջ մեղադրուող եւ 12 միաւորից գրկուած Գիւմրիի «Շիրակը» բոյկոտեց Երեւանի «Փիւնիկի» դէմ վերջին՝ 30-րդ տուրի տնային խաղը, որին չներկայացաւ:

«Ալաշկերտը» սեփական դաշտում 2:0 հաշուով յաղթեց «Գանձասար-Կապանին», իսկ «Բանանցը» տանն ուժեղ գտնուեց հետնապահ «Արարատից»՝ 2:0:

Առաջատար «Շիրակի»՝ 12 միաւորից գրկուելուց յետոյ առաջին տեղ բարձրացաւ նախորդ 2 տարիների ախոյեան «Ալաշկերտը», որն առաջնութիւնն աւարտեց 50 միաւորով: «Բանանցը» 44 միաւորով բարձրացաւ երկրորդ տեղ, իսկ նախորդ տարուայ փոխախոյեան «Գանձասար-Կապանը» 43 միաւորով նահանջեց երրորդ տեղ:

Վերջին տուրից առաջ «Շիրակը» 50 միաւորով առաջատարն էր, սակայն 12 միաւորից գրկուելու պատճառով նահանջել է չորրորդ տեղ, որը եւս տալիս է Եւրոպայի լիգայի որակաւորման փուլին մասնակցելու ուղեգիր: «Փիւնիկը» գրաւեց 5-րդ տեղը, իսկ «Արարատը» եզրափակեց մրցաշարային աղիւսակը:

Առաջնութեան լաւագոյն ումբարկու դարձաւ «Ալաշկերտի» կիսապաշտպան Արտակ Եղիգարեանը, որը վերջին տուրում եւս աչքի ընկաւ եւ կոլերի քանակը հասցրեց 13-ի: Ռմբարկուների ցուցակում երկրորդ տեղը գրաւեց Գեղամ Յարութիւնեանը, որը «Գանձասար-Կապանի» կազմում խփեց 12 գոլ: Միհրան Մանասեանն («Ալաշկերտ») ու Անդրանիկ Քոչարեանը («Արարատ») դարձել են 9-ական կոլի հեղինակ: Աւելի վաղ «Շիրակը» յայտնել էր, որ ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտէի որոշումը բողոքարկելու է Լոզանի մարզական վճռաբեկ դատարանում (CAS): Ակումբը նաեւ պահանջում է ՀՖՖ նախագահի ու ամբողջ աշխատակազմի հրաժարականը: «Շիրակը» յայտնել էր, որ 12 միաւորից գրկուելու դէպքում իր բոլոր թիմերին կը հանի Հայաստանի առաջնութիւններից:

## MMA. Միհրան Յարութիւնեանի Նորամուտը Յաղթական էր

Ռիօ-2016-ի օլիմպիական փոխախոյեան, յունահունգարական ոճի ըմբշի Միհրան Յարութիւնեանը Ռոստոմովի մէջ նորամուտը խառը մենամարտերում նշեց յաղթանակով:



Միհրան Յարութիւնեանի մրցակիցը իրանցի Ալի Յուսեֆին էր, որը խառը մենամարտերում արդէն անցկացրել էր 9 մենամարտը՝ 6 յաղթանակով եւ 3 պարտութիւնով:

Միհրան Յարութիւնեանը յաղթանակ տարաւ ժամանակից շուտ: Առաջին ռաունդում Միհրանը գեղեցիկ հնարքով գցում կատարեց մրցակցին եւ մինչեւ ռաունդի աւարտը հարուածաշարերով առաւելութեան հասաւ: Երկրորդ ռաունդի մեկնարկում կրկին մրցակցին հարուածելու հնարաւորութիւն չտուեց: Բոպչներ անց Ալի Յուսեֆին մենամարտը կանցնեցնելու ժեստ արեց, հրաժարուելով հետագայ, պայքարից:

«Շնորհակալութիւն Աստծուն եւ իմ թիմին: Այս յաղթանակը Հայաստանինն է: Շնորհաւորում եմ բոլորիս: Չգում էի նաեւ երկրպագուների աջակցութիւնը», - ասել է Միհրան Յարութիւնեանը NEWS.am Sport-ին:

Խնդիրներ չեն ունենայ այդ հարցում: Թիմը վստահօրէն առաջին տեղը գրաւեց Երկրորդ դիւիզիոնի իր խմբում,- ասել է Պօղոս Գալստեանը: Յիշեցնենք, որ 2017-ին հիմնադրուած «Արարատը» առաջին տեղին էր գրաւել Ռուսաստանի Երկրորդ դիւիզիոնի առաջնութեան «Կենտրոն» գօտու մրցաշարում, սակայն չկարողացաւ լիցենզիա ստանալ Ռուսաստանի առաջին դիւիզիոնին մասնակցելու համար: